1895 ՄԱՐՏԻ 12 (24) ԿԻՐԱԿԻ

№ 29 — ՏԵՄՆԵՒՀՈՐՍԵՐՈՐԴ ՏԱՐԻ — № 29

1895 ՄԱՐՏԻ 12 (24) ԿԻՐԱԿԻ

Հրատարակվում է չորեքշաբթի, ուրբաթ և կիրակի օրերը։
Տարեկան դինն է 10 ռուբլի, կէս տարուանը 6 ռուբլի, 3 ամսուանը 3 ռ. և մի ամսուանը 1 ռ.։
Առանձին համարը 7 կոպէկ։

Խմբագրութիւնը ընդունվում է խմբագրատանը և կենդրոնական գրավաճառանոցում։

Հասցէն՝ Тифлисъ, Редакція „Ардзаганкъ“.
կամ՝ Tiflis, Rédaction „Ardzagang.“

ԱՐԶԱԳԱՆՔ

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

Խմբագրութիւնը բաց է ամենայն օր 10—1 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

„ԱՐԶԱԳԱՆՔ“
ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

Բաժանորդագրութիւնն ընդունվում է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ (Վելիամինովսկի փող., № 22, տուն Խանզալամեանի) և «ԿԵՆԴՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ»։

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐԻՆՆ Է ՏԱՐԵԿԱՆ 10 ՌՈՒԲԼԻ։

Օտարաքաղաքացիք պէտք է դիմեն՝ Тифлисъ, Редакція „Ардзаганкъ“. իսկ արտասահմանից՝ Tiflis, Rédaction du journal arménien «Ardzagang»։

Յայտարարութիւններ ընդունվում են հայերէն և օտար լեզուներով։

ԹԻՖԼԻԶԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ և ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ որ կազմուած է Թիֆլիզի Հանգուցեալ քաղաքագլուխ

ՊՕՂՈՍ ԱՂԵՔՍԱՆԴՐԵԱՆ ԻԶՄԱՅԼԵԱՆԻ

Յիշատակը յարգելու համար, ծանուցանում են հասարակութեան, որ մարտի 12-ին կիրակէ ժամը 1½-ին Վանքի Փայր եկեղեցում տեղի կ'ունենայ հանգուցեալի հոգեհանգիստը։

ԸՊԸՆԴՈՎ ԸՊԻՐԿԸՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

„ՐՕՍՍԻԱ“

ԲԱՐԶՐԱԳՈՅՆ ՀԱՍՏԱՏՈՒԱԾ 1881 Թ.
Ս. Պետերբուրգում, Большая Морская, № 37.

ՀԻՄՆԱԿԱՆ ԵՒ ՊԱՀԵՍՏԻ ԴՐԱԳԼՈՒԽՆԵՐ 22,000,000 ՌՈՒԲԼԻ
Ընկերութեան տոկոսաբեր թղթերը պահվում են պետակ. բանկում։

Ընկերութիւնը ընդունում է՝

ԿԵԱՆՔԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆԸ

այսինքն գրամագլուխների և եկամուտների, ապահովելու ընտանիք կամ ուրիշներ ծերութիւնից, բաժինների համար, ընտանիքը ապրելի համար և այլն, առանձին շահաւէտ պայմաններով և ապահովագրողների մասնակցութեամբ Ընկերութեան օգուտներին։

1894 թուի յունվարի 1-ին «ՐՕՍՍԻԱ» ընկերութեան մէջ ապահովագրուած էին 28,246 անձինք 75,621,010 ռուբլի գրամագլով։

ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ ԴԺԲԱԽՏ ԴԵՊՔԵՐԻՑ

թէ առանձին անձինքներ, նոյնպէս և համախումբ ապահովագրութիւններ գործարաններում ծառայողներ և բանուորներ,—պակասեցնելով ապահովագրական վճարները, դիվիդենտի փոխարէն։

ՀՐԴԵՀԻՑ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ

ամեն տեսակ շարժական և անշարժ կալուածքների (շինութիւններ, մեքենաներ, առարկաներ, նաւակարգեր և այլն)։

ՏՐԱՆՍՊՈՐՏՆԵՐԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ

գետային, ցամաքային և ծովային. ապահովագրութիւններ նաւերի։

Ապահովագրութեան մասին յայտարարութիւններն ընդունվում են և ամեն տեսակ թղթեր հաղորդվում են Վարչութեանը Ս. Պետերբուրգում (Большая Морская, սեփական տուն, № 37), Կովկասեան շրջանի համար ընկերութեան վարչութեան մէջ, որ գտնվում է՝

ԹԻՖԼԻԶՈՒՄ, Սերգիեվսկայա փ. տ. № 6. և բոլոր գործակալութիւններում կայսրութեան բոլոր քաղաքներում։

Ապահովագրական տոմսակներ՝ ճանապարհորդներին ապահովագրելու համար դժբաղդ դէպքերից՝ երկաթուղիներով և շոգենաւերով ճանապարհորդութեան ժամանակ տրվում են նոյնպէս երկաթուղիների կայարաններում և շոգենաւային նաւահանգիստներում։ (50—8)

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Քննիչ Կոմմիսիա։
Թէ որտեղէ Ճշմարտութիւնը։
Հայաստան և Մակեդոնիա։
Թիւրքիայից։
ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. — Վեհափառ Հայրապետը Նոր-Նախիջևանում։ Կ. Պոլսից։ Լօնդօնից։ Բագուի քաղաքագլխի հեռագիրը։ Հանգ. Նիկ. Թամամշեանի կտակի գործը։ Իշխ. Ի. Բագր.-Մուխրանսկի։ Հրէական հարցը Ֆինլանդիայում։ Կանանց բժշկական բարձր. դասընթացներ։ Դաւոլու։ Զարուր-Դարալագեազի գաւառը։ Հակադիմերիտեան դեղ։ Սիմֆերօպոլից։ Նամակ Հաշտարիանից։ Նամակ Մոզդոկից։ Պ. պ. Լէվինի և Բեղեկիրսկու Նուագահանդէսները։
ՄԱՄՈՒԼԻ ՏԵՍՈՒԹԻՒՆ.
ՖԻԼԻՖՏՕՆ.—Ֆօմա Արկադիեվիչը։
ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ.—Զահրաղի Կարմիր-Աւետարանը։
ՔԱՂԱՔԱԿԱՆ
ՀԵՌԱԳԻՐՆԵՐ
ՏԵՂԵԿՈՒՅՑ
ՏՈՒՅՑԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՔՆՆԻՉ ԿՈՄՄԻՍԻԱ

ՃՇՄԱՐՏՈՒԹԻՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՍԻՆ.—ՔՆՆՈՒԹԻՒՆ ԿՈՏՈՐԱԾՆԵՐԻ ՏԵՂՈՒՄ։—ՎԿԱՆԵՐԻ ՅՈՒՅՄՈՒՆՔ։—ՍՊԱՆՈՒԱԾՆԵՐԻ ԴԵՐԵԶՄԱՆ։—ԿԱՐԵՒՈՐ ՀԵՌԱԳԻՐ։

(«The Daily Telegraph» փետրվարի 27).

Նոր Հասաւ մեզ հետևեալ նամակը Մուշից, որ առաքուած է մեզ Կարսի ռուսական հեռագրաթելի միջոցով։ Կարևոր նամակի հեղինակը մեր յատուկ թղթակիցն է, որ ուղարկուած էր Հայաստան՝ անձամբ տեսնելու կոտորածների վայրերն և անկողմնակալ ու ճիշդ կերպով քննելու, թէ որքան ուղիղ են և կամ սուտ արդէն տարածուած լուրերը։ Այս պատասխանատու պաշտօնն ստանձնած մեր գործակալը, ծանօթ լինելով երկրի և տեղական լեզուների հետ, լիովին ձեռնհաս է իւր պարտքը կատարելու, և, ինչպէս որ ընթերցողը կը տեսնէ, նա ամեն դժուարութեանց յաղթել է, որպէս զի կարողանայ արժանահաւատ վկաներից բան լսել և կամ անձամբ ստոյգ փաստեր հաւաքել։ Նրա հեռագիրը մի սոսկալի հարուած է։

(Մեր թղթակցից)

Մուշ, փետր. 23.

Ձեր յանձնարարութիւնը կատարելով և անելիքս հանդարտ ու յաջող առաջ տանելով, ահա ձեռնհաս եմ ուղարկել ձեզ առաջին զեկուցագիրս, թէև թիւրքերը ծածուկ և սիստեմատիքաբար ամեն հնար գործ են դնում քննութիւնը խափանելու և դիտողի աչքից դէպքերն ու դրանց շարժառիթները թագցնելու համար։

Դեռ նուիրակների գալուց շատ առաջ, երբ Հօլուարդ Հիւպատոսն աշխատում էր Սասուն հասնել, թիւրք պաշտօնեաները և յատկապէս պատասխանատու զինուորական հրամանատար Զէքի փաշան շտապում են ծածկել զարհուրելի կոտորածի հետքերը, որի գոյութիւնն անգամ Զէքին յամառօրէն ուրանում էր, և որ սակայն ես պիտի նկարագրեմ։ Փախստական հայերին մերթ յորդորելով, մերթ սպառնալով հարկադրում են վերադառնալ իրենց աւերակ գիւղերը և քարուքանդ տները վերաշինել. Գէլիէգուզան, Սէմալ և Զէնիկ գիւղերի շուրջը կանգնած զօրքերն անգամ հրաման են ստանում այդ գիւղերը նորոգելու և վերականգնելու, որ և նրանք մի կերպ անում են։

Այնուհետև փորձում են դատարկել ու հարթել Գէլիէգուզանի գիւղապետի տան ետև գտնուող փոսը, ուր ձգուած էին խառն ի խուռն հարիւրաւոր յօշատուած դիակներ, զլուխներ, ձեռքեր, ոտքեր, իրաններ, իբրև մի նեխեալ զանգուած։

Միևնոյն ժամանակ գալիս է տաճկական Կոմմիսիան Աբդուլլահ փաշայի առաջնորդութեամբ, և դա հրատարակում է, թէ ողորմած ու գթառատ Սուլթանը հրաւիրում է Հայերին՝ յայտնել իրենց տրտունջները և մերկացնել քիւրդ կամ թիւրք զինուորների ամեն մի չար գործը, որովհետև վեհապետը որոշել է պատժել յանցաւորներին և լիակատար հատուցումն տալ զրկուածներին։

Այդ խօսքերին հաւատալով նախճիրների կենդանի վկաներից շատերը թողնում են իրենց թաքստեան անկիւնները և Մուշ գնում՝ համարձակ ասելու, ինչ որ գիտեն։ Սակայն նրանց իսկոյն բռնում են ու բանտարկում և կամ թէ թիւրք զինուորների վերահսկողութեամբ հեռաւոր տեղեր պարտկում։ Ոմանք փախչում են և այժմ հրաւէր են ստացել ազգակիցներից՝ ներկայանալու և ցուցմունք տալու եւրոպական նուիրակների առջև, որոնք Էրզրումից դուրս գալու չորրորդ օրը խնուսկալէ հասնելով, իջնում են թիւրք գնդապետի տանը։

Թէպէտ բոլոր լեռնային և դաշտային ճանապարհների վրայ կանգնած են թիւրք լրտեսներ և զափտիէներ, և չնայելով որ պաշտօնական քննութիւնը դեռ չէ սկսուած, երեք հայ կէս գիշերին հնար են գտնում նուիրակներին տեսնելու և տալու նրանց մի շատ կարևոր հանրագիր, գանգատուելով իրենց դայմագամ Զիա բէգից, որ ի թիւս միւս կամայական գործերի՝ յանիրաւի ձերբակալել է երեսուն և հինգ հոգի հայ և Էրզրումի բանտը ձգել։ Այդ բանտում ժանտատենդն և հարինքը սովորական բաներ են. ուստի նոր կալանաւորներից վեց հոգի շատ չանցած մեռնում են։ Միևնոյն կայմակամը մեղադրվում է և այն բանի մէջ, որ սովորութիւն է ունեցել կեղեքելու գաւառի հարուստ հայերին, նախ բանտարկելով նրանց և ապա թէ նրանց արձակելու համար խոշոր գումարներ կորզելով։ Բողոքողները պնդում են, թէ միմիայն խնուսի գաւառից մօտ 263 ընտանիք կամ գրեթէ 2,500 հոգի Կովկաս են փախել հալածանքից ազատուելու համար։ Թէև եւրոպական նուիրակներն այս տեսակ նիւթեր քննելու իրաւունք չունին, բայց և այնպէս Քեմալեան անունով մի խնուսկալեցի հայ վաճառական մի յատուկ բողոքագիր տուաւ նրանց, դատաստան պահանջելով միևնոյն կայմակամի դէմ, որ բռնի առևանգել ուզել է նրա նորատի աղջկան, թէև դա վաղօրօք նշանուած էր՝ բռնակալի ձեռքից ազատ մնալու համար։ Նուիրակները հրաժարուեցան միջամտել այդ գործի մէջ, որ դուրս էր իրենց քննութեան շրջանից։

Կոտորածներին ականատես հայ վկաներից մի ուրիշ անձն, և յատկապէս չարաչար սպանուած քահանայի որդի Միքայէլը յանձն առաւ ցուցմունքներ անել, և որովհետև նա գրեթէ մերկ էր, ուստի նրան հագուստ տուին, որ այնպէս Մուշ տանեն։

Հետևեալ գիշերը նուիրակներն անցկացրին Ղարաքեօփրու գիւղում, ուր նրանց ներկայացան Գրգօ անունով ազնիւ հայի երբեմն մարդաշատ ընտանիքի կենդանի մնացած անդամները, որոնք փախել էին Զէնիկից։ Այդ գերդաստանն առաջ ունեցել է 61 հոգի։ Այժմ ապրում են միայն ութ հոգի. միւսները սպանուել են Գէլիէգուզանի դաղանային կոտորածի միջոցին։

Այդ կենդանի վկաների ցուցմունքը, որ նրանք որոշել են տալ Մուշում, հետևեալն է.

Սասունի անկարգութեանց անմիջական պատճառը Բաքրանլի ցեղի քիւրդերն են, որոնք յայտնի են իբրև աւազակներ։ Նրանք յանկարծ յարձակվում են մի քանի հայոց վրայ և յափշտակում նրանց խաշինքը։ Այն ժամանակ հայոց գիւղապետ Գրգօն գանգատ է յայտնում թիւրք գնդապետ Ահմէդ բէկին, որ իւր 210 զինուորներով բանակած էր Մերքէ-Մօղան դաշտի վրայ։ Թիւրք սպան հեգնում ու ծաղրում է Գրգոյին. Գրգօն էլ այնուհետև իւր գիւղացոց հետ որոշում է անձամբ դատաստան կտրել և յարձակվում է Զէնիկի խուժած քիւրդերի վրայ։ Կռուի ժամանակ հայերը վիրաւորում են մի քիւրդ և սպանում են երկուսին։ Այդ սպանուածներից մէկի դիակը քիւրդերը տանում են Մուշ և հրապարակաւ ի ցոյց դնում իբրև փաստ, թէ հայերն ապստամբութեան դրօշակ են բարձրացրել։ Այդ բանին սիրով հաւատում է Բիթլիսի յայտնի նահանգապետ Թաքսին փաշան և ըստ այնմ հեռագիր է արձակում դէպի Պոլիս, որտեղից և հրաման է գալիս՝ զօրք դուրս բերել և պատժելու հայերին։ Անհաւատների դէմ սուրը պատերազմ է քարոզվում և հրամանատար թիւրք գնդապետը հրապարակաւ կարդում է, որպէս թէ Սուլթանից ստացուած մի ֆերման, որով զինուորները խրախուսվում են ոչնչացնել բոլոր ապստամբ հայերին։ Քանի որ դրան յաջորդող ծանր դէպքի պատասխանատուն այդ գնդապետն է և կամ նոյն իսկ Զէքի փաշան, պէտք է յուսալ, որ նուիրակներն անպատճառ դրանց էլ վկայ կը կանչեն։

Գրգոյի խօսքերով հաստատվում է, որ այդ կոտորածի հրամանը տրելուն պէս՝ ահարեկ գիւղացիք փախչում են Անդօկ սարը, Գելիէգուզանի մօտերքում, և ժայռերի ետևը պատսպարուած՝ փորձ են փորձում պաշտանուել իրենց հին հին հրացաններով։ Այն ժամանակ զինուորները խոստանում են կայսերական զօրքի հովանաւորութիւնը այն ամենքին, որոնք զինաթափ կը լինին և կ'ապաւինուին թիւրք բանակին։ Մի հայ քահանայ ընդունում է այդ առաջարկը, նոյնն անում են և 360 անձինք՝ մեծ և փոքր, թէ այր, թէ կին։ Թիւրք գնդապետը կարգադրում է կերակրել հայերին զինուորների հետ միասին. յետոյ՝ գիշերուայ մութը իջնելուն պէս՝ հրամայում է փոքր ինչ հեռացնել նրանց բանակից, և այնտեղ նրանք կոտորվում են և մի լայն փոսի մէջ ձգվում՝ մեռած ու հոգեվար միասին։

Կոտորածի հանգամանքները քննելի են, և ինձ թւում է թէ բոլոր ազգասէր անձինքներն անգամ նսեմանում են այդ դժոխային արհաւիրքի առջև։ Ես չեմ կարող կեղծիք համարել դրանց. այլ ցաւելով պիտի ասեմ, որ ճշմարտութիւնն ստուգուած է բազմաթիւ անկախ և ականատես վկաների ցուցմունքով։

Անդօկ լերան անձնատուր չեղած հայերն այնուհետև հալածվում են և սպանվում մերթ անարգիչ չարութեամբ ու գազանութեամբ, մերթ վայրենի զուարճութեամբ։

Տաժանելի չարչարանքով, մեծ վտանգի ենթարկուելով ու երկար ժամանակ աստանդական թափառելով կենդանի մնացած վկաները քննելու են Մուշում նուիրակների առջև։ Սոսղներ կան, թէ նրանց պատմութիւնը հաստատելու է և Զէնիկցի Միքայէլ Առաքելեանը, որ ականատես էր կոտորածին, և որի երեք ընկերները վկայութիւն տալու համար թիւրք Կոմմիսիային ներկայանալիս՝ բռնուած և բանտարկուած են։

Մի հայ կին էլ կարողացաւ տեսնել նուիրակներին Կոզ գիւղում, ուր հետևել էր նրանց, և պատմեց, թէ ինչպէս նրանց գալու օրը Սիմօ գիւղի էֆէնդիները բռնում են իւր նորատի աղջկան ու բռնահարում՝ փոխարէն 5 լիրայի, որ պարտք էր նրանց իւր մարդը։ Այս դէպքը քննելու իրաւունք չունէին նուիրակները։

Նրանք Մուշ հասան երկուշաբթի յունուարի 21-ին։

Մինչև այժմ հարցած վկաների թիւը չնչին է, ուստի հաւանական է, որ քննութիւնը գոնէ երկու ամիս կը տևի։

Թիւրք պաշտօնեաները կաշառքի ու սպառնալիքի միջոցով յաջողել են կառավարութեան նպաստաւոր և հայերին աննպաստ ցուցմունք առնել Ս. Կարապետ վանքի մի քանի կրօնաւորներից։ Այդ վարդապետները վկայել են, թէ հայերի մէջ իբրօք մի վտանգաւոր յեղափոխական շարժումն կար օրինաւոր կառավարութեան դէմ և թէ ապստամբութեան նշանն արդէն տրուած էր օսմանեան գնդերի որ և է հրացան արձակելուց առաջ, և թէ թիւրք զինուորների վճռական ընթացքը հայ գիւղացոց յամառ ընդդիմութեան հետևանք էր։ Այս ցուցմունքը, որ կարող է ի նկատ առնուիլ ուր ուրեք, չէ բացատրում, թէ ինչպէս անզէն գիւղացիք, որոնք սպանել են վեց-եօթը քիւրդ, և ոչ մի զինուոր չեն սպանել. վերջապէս վկայող վարդապետները եղած էլ չեն Սասունում։ Այս էլ ասենք, որ այդ վարդապետները յայտնապէս վատ բնաւորութեան տէր մարդիկ են։ Դրանք էին, որ դեռ մի երկու տարի առաջ պիտի վռնտուէին վանքից Ներսէս եպիսկոպոսի որոշմամբ, որին յետոյ նրանք մատնեցին կառավարութեան, իբր թէ նա Ցամատեան դաւադրի կուսակից է։ Անմեղ եպիսկոպոսը դատապարտուեցաւ հինգ ամեայ բանտարկութեան և նրա տեղը դաւաճան արեղաներից մէկը դրուեցաւ։

Քիւրդիստանի զանազան մասերում ակներև դրդռում են մահմեդական ժողովրդի ֆանատիկոսութիւնը, և Վանի, Խարբերդի և ուրիշ քաղաքների բազարներում շատ են խօսում քրիստոնեաներին սպառնացող կոտորածի վրայ, որ սկսուելու է Ռամազանի տօնին։

Ես կարծում եմ, որ այդ լուրերը ծայրայեղ են. սակայն թէ դրանք բոլորովին անհիմն չեն, այդ երևում է այն հանգամանքից, որ վարժապետութիւն անող մօլլաները ըսկսել են քարոզել, թէ պէտք է հաշտ ապրել քրիստոնեաների հետ։ Սակայն իմ գիտեցածիս նայելով՝ մի քանի մոլեռանդ թիւրքեր դրդռում են քիւրդերին՝ մասնակցելու յառաջիկայ կոտորածին։

Այս բոպէիս ամբողջ Քիւրդստանում չարաչար ստիպում են քրիստոնեայ գիւղացիներին, որպէս զի նրանք կառավարութեան շնորհակալութիւն յայտնող հանրագրեր ստորագրեն, յայտնելով թէ ողորմած կառավարութիւնը պաշտպանում է նրանց կեանքն ու գոյքը յեղափոխական հայերի դէմ։ Ստորագրութիւն չտուողը բանտարկվում է։

Դժուար է նկարագրել Փոքր-Ասիայի քրիստոնէից ողորմելի վիճակը։ Նրանք յարատև երկիւղով պաշարուած են. փողոցները լի են հազար կերպ ծպտեալ լրտեսներով. ձերբակալութիւններն անվերջ են, և դրանք կատարվում են գլխաւորապէս դրամ կորզելու նպատակով և ստէպ՝ անձնական վրէժխնդրութեան յաղուրդ տալու տենչանքով։ Նորերս բանտարկուած էր մի գիւղացի իւր մօտ մի կասկածելի նամակ գտնուելուն պատճառով, որի մէջ լիշուած էր Օհաննէս անունով մի քահանայ, սակայն առանց դրա ազգանունն և կամ բնակութեան տեղը ցոյց տալու։ Այս դէպքից յետոյ սկսում են խուզարկութիւն անել, և թէպէտ Օհաննէս անունով միակ հոգևորականը ապրում էր շատ հեռու տեղ, և յատկապէս խնուս գաւառի կարաչօբան գիւղում, նրան բռնում են և կենդրոնական բանտը ձգում։ Այդ վտանգաւոր համարուած եկեղեցականը մի գրագէտ մարդ է և խուլ ու կոյր լինելուց զատ՝ 103 տարեկան է։

Հռչակաւոր հայ Մուրադը, որ պաշտպանում էր իւր գիւղացոց Սասունի կռուի ժամանակ, քննուեցաւ Բիթլիսում։ Դատաւորներն աշխատում էին խոստովանութիւն որսալ նրանից և նրա ընկերներից, թէ Անգլիան յոյս է տուել օգնելու հայերին այն նպատակով, որ նրանք ապրստամբութիւն յարուցանեն. սակայն Մուրադն և իւր ընկերները արիաբար հերքեցին այդ զրպարտութիւնը և մահուան դատապարտուեցան։

Փ. Վ.

ԹԷ ՈՐՏԵՂ Է ՃՇՄԱՐՏՈՒԹԻՒՆԸ

Երբ քաղաքակիրթ ազգերի հասարակական կարծիքը, գրեթէ հաւասարապէս, բուռն կարեկցութեամբ է վերաբերվում տառապեալ վիճակի մէջ գտնուող Թրքահայերին, ցաւալի է

տեսնել, որ այդ մարդասիրական զգացումների արտայայտության ժամանակ մամուլի անշնորհ մասը՝ այժմէն իսկ շփոթ կարծիքների և վայրիվերոյ տեղեկությունների վերայ հիմնուած. աղաղակներ է բարձրացնում ազդեցության շրջանի մասին և առանց խղճահարելու ցաճկահայերի օրհասական կռիւները անգղիական ինտրիգներին և ամերիկական միսիոնարների պրոպագանդային վերագրում, որ շատ ձեռնտու է բարձր. Դրան։ Այդ բովանդակությունն ունէր «Նովոյէ Վրէմիայի» № 6811 լօնդօնից թղթակցությունը, որ թարգմանաբար առաջ է բերուած «Արձագանքում.» թղթակիցը պնդում է, որ Սասունի անցքերը անգղիական ագիտացիայի արդիւնք են, որ Անգղիայի կարեկցությունը թրքահայերին կեղծ է, որ նա ցանկանում է լիովին ենթարկել իր ազդեցությանը հայերին և այդ կը յաջողուի, որովհետև բարեկարգուած թրքահայ նահանգներում վարչական գործերի ղեկավարությունը կ՝անցնի միսիոնարական Կոլլէժներում աւարտածների ձեռքը, որոնք իբր թէ երկրում միակ կրթուած անձիքներն են։ Ճանապարհորդելով Թիւրքիայի զանազան կողմերում և մասնաւորապէս, երկար ժամանակ ապրելով Մշոյ աշխարհում և Կիլիկիայում, պարտք եմ համարում հերքելով վերոյիշեալը ցոյց տալ ճշմարտությունը։

Պէտք է ասել, որ միսիոնարների պրոպագանդան աւելի յարմար հող է գտել իրան համար թիւրքահայ նահանգների արևմտեան մասում. Խարբերդում Մարսուանում և Կիլիկիոյ Այնթափ քաղաքում միսիոնարները ունին հաստատած կոլլէժներ։ Ուսում տարածելով հայերի մէջ, կրթելով հայ պատանիներին միսիոնարները չեն պահանջում հայերից հեռանալ իրանց մայրենի եկեղեցուց, այդ թողնուած է նորանց ազատ կամքին. ինձ պատահել է հանդիպել կոլլէժներում կրթուած պարոնների, որոնք անկախ գործերի տէր լինելով, շատ լուրջ կերպով են ըմբռնում հայրենիքի կարիքները և գնահատում հայ եկեղեցու պատմական նշանակությունը հայերի համար. նոյն իսկ բողոքական հայ քարոզիչները իրանց քարոզներում ողևորությամբ և մեծ ակնածությամբ են յիշում Ս. Գր. Լուսաւորչին, սրբացնելով նրա գործերը։ Միսիոնարները, ճիշտ է, կարեկցել են ճնշուած և հալածուած հայերին, բայց հակակառավարչական ագիտացիայից նորանք միշտ հեռու են կացել, այդ կը վնասէր նորանց գործունէությանը։

Եզրակացնելով նամակս պիտի ասեմ դարձեալ, որ նախ՝ Սասունցիք առանց օտարի օգնության միայն իրանց թոյլ ոյժերով են մղել իրանց օրհասական կռիւները, իսկ այժմ նրանք կարօտ են և սաստիկ կարօտ են հաւասարապէս բոլոր քրիստոնեաների կարեկցության և օգնության. երկրորդ՝ չափազանցություն է և անարդար չափազանցություն է ասել, որ միայն կոլլէժներից են դուրս գալիս կրթուած մարդիկ, ընդհակառակը՝ դրանց թիւը շատ և շատ քիչ է համեմատելով հայ միջնակարգ ուսումնարաններից աւարտածների հետ, և երրորդ՝ որ թրքահայերը վերաբերուել են անխտիր և հաւասարապէս բոլոր քաղաքակիրթ ազգերին և միտք չունի այժմէն դուշակել, թէ հայերի տրամադրությունները որի կողմը կը հակուին. յառաջադիմության արգելքներ չյարուցանելը, անկեղծությունը յարաբերությունների մէջ ամենաէական գրաւականն է ազգերի փոխադարձ համակրության։

Ազէրօր։

Մոզդոկ։

ԹԻՒՐՔԻԱՅԻ

Կ. ՊՕԼՍԻ ԴԻՊՔԵՐը։—ՀԱՅԿԱԿԱՆ ԿՈՄԻՏԷՍԱՆ։—ԵՒՐՈՊԱԿԱՆ ՆՈՒԻՐԱԿՆԵՐը։

(«The Daily News» մարտի 11.)

Այդ լրագրի թղթակիցը հեռագրում է Կ. Պոլսից, թէ Մուշի կարօտեալներին դրամական նպաստ հասցնելու համար հանգանակությունն անող հայերի քննությունը դեռ չէ սկսուած, և կարծում են թէ սկսուելու էլ չէ՝ մինչև որ Բայրամի տօնը չանցնի։—Պօլսում հաւատացած էին, թէ Կարաթէոդորի փաշան Սամսոից կանչուած էր՝ որպէս դեսպան Լօնդոն առաքուելու համար։ Այժմ նա նշանակուած է Կրետէ կղզու նահանգապետ։—Պէրաչի մի արուարձանում երեք մարդ մեռցնող քիւրդը և այդ սրիկայի առանց դատաստանի սպանությունը ոչ մի քաղաքական նշանակություն չունի։—Միւնիր-բէյը վերադարձրեց Հայոց Պատրիարքին այն տեղեկագիրը, որ Սրբազանն ուղղել էր Սուլթանին, նկարագրելով տաճկաբնակ Հայոց վիճակը։

Այս գրությունը Պատրիարքին յետ բերելիս Միւնիր-բէյը պահանջեց նրանից մի աւելի մեղմ ձև տալ գրության և յիշատակել դրա մէջ Սուլթանի արքայական ողորմածությունը և վստահություն յայտնել այն արդարադատ ոգու վրայ, որով առաջնորդվում է Վեհապետը իւր ամեն գործերում։ Սակայն Պատրիարքարանը հարկ չհամարեց որ և է փոփոխություն անել տեղեկագրի մէջ և որոշեց նոյնությամբ վերադարձնել Միւնիր-բէյին։—Մուշ նստած Հայկական Կոմիսիայի գործը դանդաղ է յառաջ գնում։ Վերջին զեկուցումների մէջ որ և է կարևոր վկայության լուր չկայ։ Կոմիսիային ներկայացած մի քանի վկաների հայերէնից զատ ուրիշ լեզու չիմանալուն պատճառով՝ բրիտանական, ֆրանսական և ռուսաց դեսպանները որոշեցին հայախօս թարգմաններ ուղարկել Մուշ։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՎԵՀՍԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՆՈՐ-ՆԱԽԻՋԵՒԱՆՈՒՄ

—

Մարտի 4-ին, ինչպէս հաղորդում է «Պրեազ. Կրայ» լրագիրը Նախիջևանից Նովոչերկասկ ուղևորուեցին բարեշնորհ Նահապետ և Յուսիկ վարդապետները, որոնց Նորին Վեհափառությունը յանձնարարել էր իւր օրհնությունը տալ Նակաղնոյ ադամանին, այլ և շնորհակալությունը յայտնել ընդունելության համար, որ իրեն ցոյց է տուած Դօնի նահանգում։ Ն. Ի. Սվետոպոլկ-Միրսկին սիրալիր ընդունելություն ցոյց տալով պատգամաւորության, ցաւ յայտնեց, որ տկարությունն արգելում է նրան անձամբ շնորհաւորելու Նորին Վեհափառության գալուստը։

Սրանից յետոյ վերոյիշեալ պատգամաւորությունն այցելեց Դօնի զորավարների ատամանի օգնական գեներալ մայոր Ս. Ա. Դրէկովին շնորհակալություն անելու նորա ցոյց տուած ընդունելության համար։

Կիրակի, մարտի 5-ին, Նախիջևանի մայր եկեղեցում, պատարագի սկզբում Նորին Օծությունը Վեհափառ Կաթողիկոսն ամենայն Հայոց Մկրտիչ Ա. քարող խօսեց, բնաբան առնելով «Սիրեսցես զընկեր քո» խօսքերը։ Ըսկսելով, թէ Աշետարանը ուսուցանում է բոլոր քրիստոնեաներին միմեանց սիրել, բարձրաստիճան քարոզիչը յայտնեց, որ այդ քրիստոնէական սէրը պէտք է շատ ընդարձակ մտքով հասկանալ, որ Քրիստոսի պատուէրով այդ սէրը պիտի վերաբերի բոլոր մարդոց, առանց տարբերության ազգության և դասակարգերի և թէ որքան մարդիկ միմեանց մօտիկ կը լինին, որքան կը սիրեն և կօգնեն միմեանց, այնքան աւելի նոքա կը վայելեն անձնական երջանկություն։ «Այսպէս, շարունակեց Ատենաբանը, Ես էլ խնդրում եմ ձեզ, իմ սիրելի զաւակներս, որ Աւետարանի խօսքերը հասկանաք ճշմարտությամբ։ Սիրեցէք միմեանց, առանց տարբերություն անելու, սիրեցէք աղքատներին, դժբաղդներին, անտուն անտէրներին, ինչպէս սիրում էր նրանց և մեզ էլ պատուիրեց սիրել Ինքն մեր Տէրը՝ Յիսուս Քրիստոսը»։ Ապա Նորին Վեհափառությունը խօսելով լուսաւորության նշանակության մասին, բացատրեց թէ միայն նա ունի ճշմարտության լոյս, ով զարգացնում է իւր հոգին, հարստացնում է իւր միտքը գիտություններով, և ընդհակառակն՝ ով որ զուրկ է դաստիարակության արդիւնաւոր պտուղներից և լուսաւորությունից, այդպիսին խարխափում է խաւարի մէջ և ճշմարտության լոյսը նրան անհասկանալի է։

Ուստի և դառնալով դէպի մայրերը, Նորին Վեհափառությունն ասաց. «Ձեր մանուկների դաստիարակությունը ձեզնից է կախուած։ Մանուկն առաջ առաջ պէտք է դաստիարակուի ընտանիքում, որովհետև զպրոցը արդէն շարունակում է այն, որի սկիզբը դրած է մայրենի յարկի հովանեաց ներքոյ»։ Վերջաբանում Նորին Օծությունն ազդու և ընտիր ոճով յիշեցրեց աղօթաւորներին մշակ և երկրագործ դասակարգերի նշանակությունը։ Ատենաբանի խօսքով լուսաւորեալ մարդիկ միշտ պէտք է աչքի առաջ ունենան բնակիչների այդ օգտաւէտ դասակարգերը, որոց ձեռքերի աշխատանքով կազմվում են աշխարհիս հարստությունները։ Տաճարը լիքն էր աղօթաւորներով։

***

Կ. ՊՕԼՍԻՑ Ռէյտերի գործակալությունը հեռագրում է.—«Բիթլիսի նախկին նահանգապետ Թահսին փաշան, որ նորերս կանչուած էր, մարտի 10-ին տեղս հասաւ։ Ցամաք իջնելուն պէս նա գնաց պալատ»։

***

Թիֆլիզի քաղաքագլխի օգնական պ. Իվանէնկօն ստացել է Բագուի քաղաքագլխի փոխանորդ պ. Անտոնովից մի հաղորդագրություն, որի մէջ ասուած է, թէ Բագուի քաղաքային խորհուրդը իւր ամսի 7-ի նիստին լսելով Թիֆլիզի քաղաքագլուխ Իզմայլեանի մահուան վշտալի բօթը, յարգեց նրա յիշատակը ոտքի կանգնելով և միևնոյն ժամանակ որոշեց լիազօրություն տալ Բագուի քաղաքագլուխ Կ. Ա. Իրիցկուն, որ այժմ Պետերբուրգ է գըտնվում, Բագուի քաղաքային խորհրդի կողմից արծաթեայ պսակ դընել հանգուցեալ Իզմայլեանի դագաղի վրայ և ցաւակցություն յայտնել հանգուցեալի այրիին և Թիֆլիզի քաղաքային խորհրդին։

***

Հաստատ աղբիւրներից լսում ենք, որ Կառավարիչ Սենատը հաստատել է Թիֆլիզի նահանգական դատարանի վճիռը, որով անվաւեր է համարուած Նիկ. Դ. Թամամշեանի կտակը, որ իւր հօրից մնացած, որոշ պայմաններով, դրամագլուխը կտակել էր իւր ամուսնուն՝ տիկ. Դարիա Թամամշեանին։ Այժմ 250,000 ռ. գումարը տարեկան 4 տոկոսիքով անցնում են համաձայն կտակի Դաւիթ Թամամշեանի (Նիկողայոսի հօրը), սորա ժառանգներին, այն է դստեր իշխանուհի Սալօմէ Երկայնաբազուկ-Արզութեանին և միւս դստեր իշխանուհի Նատալիա Թումանեանի թոռներին, այն է պ. Պլատոն Գուրգէնբէկեանի որդոց, հաւասար չափով։ Մեր ընթերցողները յիշում են, որ Դաւիթ Թամամշեանի կտակի համաձայն նորա սեռունդից նոքա ունին իրաւունք վայելելու յիշեալ 250,000 ռ. տոկոսիքը, որոնք հայլուսաւորչական եկեղեցու որդիք են մնում և չեն ամուսնացած այլ կրօնների պատկանեալ անձանց հետ։

***

† Մարտի 11-ին, առաւօտեան 6 ժամին վախճանուեցաւ Թիֆլիզում խորին ծերության հասակում իշխան Իվանէ Բագրատիոն-Մուխրանսկին, որ 1832-ից մինչև 1850 թիւը քաջությամբ մասնակցում էր լեռնային պատերազմներին, իսկ 1854-ին Խրիմի պատերազմին, առաջնորդելով գուրիական կոչուած զօրագունդը։ Թողնելով ծառայությունը գեներալ լեյտենանտի ատիճանով, սկսեց մեծ ծաւալով գիւղատնտեսությամբ պարապել։ Կովկասի ամենամեծ կալուածատէրներից մէկն էր։ Նա ամուսնացած էր իշխանուհի Դադիանի հետ, որ Մինգրելիայի վերջին արքայազնի քոյրն էր։ Սոցա որդին իշխ. Կոնստանդին Մուխրանսկին, բարձրագոյն պալատի եգերմէյստէր, Թիֆլիզի նահանգի ազնուականների պարագլուխն է։

***

Ֆինլանդական «Hufvestds bladet» լրագիրը հաղորդում է, թէ Ֆինլանդիայում հէնպէ հարցը բոլորովին նոր կերպարանք է ստանում։ Սէնատին մի նոր օրինագիծ է ներկայացրած, որով առաջարկվում է Ֆինլանդիայում ապրող հրէաներին շնորհել այն բոլոր իրաւունքները, որ վայելում են այդտեղ գտնուող բոլոր օտարականները։ Այդպէս միւս օտարհպատակների նման հրէաները նոյնպէս իրաւունք են ստանում ազատ ապրել երկրում, կարող են անշարժ կալուածքներ և տներ գնել, պարապել առևտրով, և այլն։

***

Մայրաքաղաքի լրագրները հաղորդել էին, թէ շուտով կը բացուին կանանց բժշկական բարձրագոյն դասընթացները. այժմ «Գրաժդանին» լրագիրը հաղորդում է թէ այդ լուրն անժամանակ է։

***

Հինգշաբթի մարտի 9-ին Թիֆլիզի քաղաքային խորհրդի արտակարգ նիստում կարդացուեց Հանգուցեալ Պ. Իզմայլեանի յիշատակը յարգելու համար կազմուած յանձնաժողովի զեկուցումը։ Խորհուրդը վճռաբանութիւններից յետոյ կայացրեց հետևեալ վճիռները. 1) Պօղոս Իզմայլեանի ընտանիքին նշանակել թոշակ 3000 ռուբլի տարեկան, որից 1600 ռուբլին հանգուցեալի այրի Լիդիա Իզմայլեանին ցկեանս, 800 ռուբլի նրա հարազատ որդուն մինչև բարձրագոյն դպրոց աւարտելը և 600 ռուբլի հանգուցեալի մօրը՝ Աննա Սողոմոնեան Իզմայլեանին. Լ. Ի. Իզմայլեանի մահուան դէպքում նրա երկու զաւակներին տալ 600-ական ռուբլի տարեկան մինչև նրանց չափահաս դառնալը. 2) թոյլատրություն խնդրել որ հանգուցեալ Պօղոս Իզմայլեանի պատկերը գրուի քաղաքային խորհրդի դահլիճում և որ «Նոր փողոցը» անուանուի «Իզմայլեան»։

***

ԴԱՎԱԼՈՒ գիւղում (Երևան. նահ.) փոստային բաժանմունք է հաստատուած։

***

«Կավկազ» լրագիրը հաղորդում է որ երկրիս պ. կառավարչապետի խորհուրդը պէտք է իմիջի այլոց քննէ Զարուր-Դարալեազեազ գաւառի Զորոյոն Ենգրոնի հաշորաշէնից մահմեդական Դաշ-Արիս տեղափոխելու խնդիրը։

***

Նախկին քաղաքագլուխ պ. Ա. Մատինեանը քաղաքային հիւանդանոցին ընծայել է դօքտոր Ռուի 5000 դրամ հիւանդիքներու հիւթը, որ նա յատկապէս ապսպրած էր Փարիզից։

***

ՍԻՄՖԻՐՈՊՕԼԻՑ մեզ գրում են

«Տեղիս կրթուած հայ օրիորդները մի գեղեցիկ միտք են յղացել, այն է՝ պատրաստվում են մի գրականական-երաժշտական երեկոյթ կազմել Մարտի 18-ին յօգուտ Հայոց ուսումնարանի կից բացուած կարուձևի արհեստանոցի։

Երկու հայ պանդուխտ պատանիներ, որ մի թրքահպատակ տաճկի դրդմամբ իսլամություն էին ընդունել, և որի մասին տեղւոյս Ղ. Ք. Յովսէփեանն շտապել էր «Նոր-Դարի» մէջ հաղորդել, թէ իւր աշխատությամբ գործը յանձնուած է դատարանին, այդ սխալ է. Ճշմարիտն այն է, որ իրաւ երկու հայ իսլամություն են ընդունել, բայց ոչ գործը յանձնուած է դատարանին և ոչ Տէր-Ղ. աշխատել է այդ մասին։ Տէր հօր սովորությունն է չկատարած գործը կատարած համարելով իւր մասին ոգևորուած ճառեր խօսել։

***

ՀՈՉՏՈՐԽԱՆ, 27 փետր.

(Թղթակցություն «Արձագանքի»)

—

Երէկ ս. պատարագի ժամանակ արժ. Յովսէփ քահ. Բունեաթեանցը յայտնեց, թէ կոնսիստորիան կոնդակ է ստացել Վեհափառ Հայրապետից, որով Հաշտարխանի թեմին «ժամանակաւոր կառավարիչ է նշանակում դերապ. Խորէն եպս. Ստեփանէին։

Սորանից յետոյ, յիշեց, որ առաջնորդ չլինելու պատճառով՝ երկու տարի է ինչ ինքը կառավարում է ժողովրդին և, ըստ չափու կարողության, յաճախակի ս. եկեղեցում քարող է կարդացել ժողովրդին, յիշեցնելով իրենց պարտքերը, պակասությունները, բարի գործերը, աւելացնելով ս. Յովհաննէս Մկրչի խօսքերը, թէ «Ես մկրտեմ զձեզ ջրով ապաշխարության» բայց շուտով կը գայ գիտնական-պերճախօս Խորէն եպիս., որ իւր ազդու քարոզներով կը մտցնի ձեր մէջ ազդասիրության հոգին... «նա մկրտեսցէ զձեզ ի հոգին սուրբ»։ (և հոգևորականներին ի հուր»)։

Քարոզի մէջ աչքի ընկաւ «միաբանության» և «համերաշխության» մասին կարդացածը. օրինակ վերցնելով Ե. դարում հայերի միաբանությունը պարսիկների դէմ, յորդորեց որ Հաշտարխանի ժողովուրդն էլ միաբան գործի, հեռու կենաց թղթախաղից, շռայլությունից, պճնասիրությունից և ցոփ կեանքից, այլ միաբան ուժով գործէ ազգային հաստատությունների յառաջադիմության համար։

Ինչպէս երևում է, այս կտորը գրել էր ս. Վարդանանց տօնին կարդալու, բայց որովհետև կոնսիստորիայի անդամները՝ որոնց նախագահն է ինքը հայրը Բունեաթեանցը, իրենց ներկայությամբ չէին կամեցել պատուել այդ օրուայ հանդէսը, այդ պատճառով թէև ուշ, բայց և այնպէս յարմարեցրել էր նոր նիւթի հետ կարդալու։

Թէև հայր Բունեաթեանցը այս երկու տարուայ ընթացքում յաճախակի քարոզներ է կարդացել, բայց այդ քարոզներից շատերը, դժբաղդաբար, մինը միւսին հակասական են եղել, ինչ որ մէկ օր ասել է, նոյնը մի ուրիշ օր հերքել է, կամ հակառակն է գործել։ Օրինակ, երբ անցեալ տարի արծարծուեցաւ սեմինարիայի հարցը, ծխականներն ասում էին, որ այստեղ հեշտ կարելի է սեմինարիա բանալ, որովհետև մեր թեմի եկեղեցիները մեծ դրամագլուխ ունին։ Արժանապատիւ հայր Բունեաթեանցը այս լսելով՝ եկեղեցում «շեշտելով» կարդում է, թէ «յոյսներդ մի դրէք եկեղեցական գումարների վրայ, այլ ձեր միջոցներից սեմինարիայի հաստատության համար դրամագլուխ կազմէք»։ Անսպասելի կերպով երէկ եկեղեցում լսում եմ այս «յանդիմանությունը» հայր Բունեաթեանից, որ «շեշտելով» կարդում է՝ «մինչև այժմ միջնակարգ դպրոց չունիք, մինչդեռ մեր ամբողջ թեմի եկեղեցիների դրամագլուխը 400,000-ից աւելի է, որից 150,000-ից աւելի միայն մեր քաղաքի (Հաշտարխանի) եկեղեցիների դրամագլուխն է»։

Այս ինչի՞ նշան է։

Դեռ ևս հանգ. Քալանթարեանց քահանայի դիակը չէր թաղուած, որ լուր տարածուեց, թէ տիրացուներից մէկն արդէն համախօսական է կազմել և ստո-

---

ՖԵԼԻԵՏՕՆ

ՖՕՄԱ ԸՐԿԱԴԻԵՎԻՉԸ

—

—«Ես քեզ ասում էի, որ այդ շանը չպէտք է դիմել»։ Այս խօսքերը շատ որոշ և պարզ հասան Մարիամի ականջին, որ պատուհանից նայում էր իրենց դրունից դուրս եկող երկու պարոններին։

Բայց այդ խօսքերն այնքան խոր չխոցեցին երիտասարդ օրիորդի սիրտը, որքան նրա հօր ձայնը, որ լսուեց բացուող դռների միջից.

—Օ՜, ինչ անամօթ մարդիկ են, տըզրուկի պէս կպել են, կարծես ես իրանց պարտական լինիմ։

Մարիամը ոչինչ չէր պատասխանում, այլ շարունակ նայում էր պատուհանի։

—Ի՞նչ ես բաց պատուհանի առջև կանգնել այս անձրևով, կը մրսես, փակի՛ր պատուհանը։

—Մարդիկ անձրևի տակ մանեն գալիս, չեն մրսում—պատասխանեց աղջիկն առանց դառնալու—ես ինչու պիտի մրսեմ։

—Գժուե՞լ ես, ինչ է, Մաշա. կը մրսես, ասում եմ քեզ, ասաց գրգռուած Ֆոմա Արկադիեվիչը և մօտենալով փակեց բաց պատուհանը։

—Այսօր շատ փափկասիրտ ես, ասաց Մարիամը այնպիսի լրջությամբ, որ երբէք գործ չէր դրել իր հօր վերաբերմամբ։

Ֆոմա Արկադիեվիչը թէև նկատեց այդ լրջությունը, բայց ոչինչ չզգաց ու չհասկացաւ։

—Հա, հա, հա, ինչ լաւ ասացիր, դուշկա, ճիշդ որ փափկասիրտ. մարդ էին գտել խաբելու. բարեգործությունն ենք անում, գահլաս տարան էլի՛, մարդ չգիտէ գրանց ձեռից ո՞ւր փախչէ։

—Բայց գրանք կարծեմ քեզ մօտ առաջին անգամն էին եկել, ասաց Մարիամը։

—Դրանց պէս հպարտաորները գալիս են ու գնում, գրասենեակումս էլ հանգստություն չեն տալիս լսեցի՞ր ինչեր էին խօսում.

—Փողոցում... ասաց աղջիկը նայելով ուղղակի հօր աչքերին։

Ֆոմա Արկադիեվիչը ցնցուեց, բայց ինքն էլ չհասկացաւ թէ ինչից էր այդ ցնցումը։ Իր ամբողջ կեանքի մէջ նա իր տանը իր աղջկանից այդպիսի նայուածք չէր տեսել, ուստի մի վայրկեան անգամ չէր կարող երևակայել, թէ այդ հայեացքի մէջ նախատինք կայ բայց բնությունն իրն արաւ և նա ցընցուեց։

—Ի՞նչ փողոցում, այստեղ դահլիճում, լսիր լսում, կէս ժամ է գլուխս տարան։

—Այն էլ լսեցի, ասաց Մարիամը, նստելով պատուհանի կողքին դրած աթոռի վրայ։

—Ականջներումս մազոլ բսաւ էլի՛, այնքան յիմար յիմար խօսեցին, շարունակեց Ֆոմա Արկադիեվիչը մօտենալով աղջկայ սեղանին և օղկելոյնի սրուակից մի քիչ աճելով բուռը սկսեց շփել ճակատը։

—Նրանց ոտերին էլ կարծեմ մազոլներ կը բսնի, եթէ ամեն մնից այնպէս դուրս գան, ինչպէս այստեղից, ասաց Մարիամը, կրկին նայելով հօր վրայ։

—Հա, հա, հա, ծիծաղեց Ֆոմա Արկադիեվիչը, իսկ որ մազոլներ կը բսնի. Թող էնքան ման գան հոգիները դուրս գայ, անձրևից թրջուած մուկն են դարձել։

—Գլուխներն էլ որ ցաւի, օգըկօլոյն չեն ունենալ քսելու, ասաց Մարիամը հօր վրայ մի զայրացկոտ ակնարկ ձգելով և մօտենալով բաց դաշնամուրին՝ ամուր վայր ձգեց խուփը։

—Ի՞նչ է պատահել քեզ, Մաշա, հարցրեց զարմացած Ֆոմա Արկադիեվիչը։

—Ոչինչ, մատերս մազոլ է եղել, փակում եմ, որ էլ չածեմ...

Ֆոմա Արկադիչը միայն այժմ նկատեց, որ Մարիամը իրեն հետ կատակ չէ անում և ամենևին նոյն տրամադրությունը չունի, ինչ որ ինքը։ Բայց նրա համար այդ նկատելը դժուարին չէր։ Ամբողջ քսան տարի է որ նա ճանաչում է իր զաւակին. դրանից տասը տարին իր մօրից զրկուելու օրից նա միայն իր հօրն է տեսել և գուվերնատկաներին. մթթէ կարող էր պատահել որ նա չմտածէր նոյնը, ինչ որ հայրն է մտածում... ոչ, ոչ, դատարկ կասկած է որ մի վայրկեան անցաւ Ֆոմա Արկադիչի մտքից, ծիծաղելի է մինչև անգամ... «ջղային է», մտածեց նա. հանգուցեալ մայրն էլ այդպէս էր։

—Ես տեսնում եմ, Մաշա, որ քո ջղերդ անհանգիստ են, քեզ հարկաւոր է մի քիչ զուարճանալ։

—Մեր խօսակցությունը ինքն ըստ ինքեան զուարճալի է, պատասխանեց Մարիամը։

—Մաշա, ի՞նչ է պատահել քեզ. այդ ի՞նչ է նշանակում. դու ինձ հետ ի՞նչպէս ես խօսում. առանց այն էլ ես գրգռուած եմ այդ յանդուգն մարդկանց այցելությունից, այժմ էլ կապրիզներ ես ցոյց տալիս. . .

—Յանդուգն մարդի՞կ, կրկնեց հեգնօրէն Մարիամը, ինչու՞ են յանդուգն, ի՞նչ արին քեզ, ինչով վիրաւորեցին։

—Ինչպէ՞ս թէ ինչ արին, կէս ժամ գլուխս ցաւացրին, ժամանակս խլեցին, առողջությունս խլեցին և արիւնս պըղտորեցին։

—Բայց նրանք քեզ ոչ մի ծանր խօսք չասացին, ոչ մի վատ խորհուրդ չտուին։ Նրանք քեզ պատիւ էին արել.. ասաց Մարիամը, շեշտելով այդ խօսքի վրայ։

—Պատի՞ւ, ինչպէս չէ, երբ նրանց փող է հարկաւոր պատիւ կանեն։

—Բայց նրանց փող չէր հարկաւոր, կարծեմ որ նրանք քեզանից փող չէին խնդրում։

—Ի՞նչպէս չէ, միայն հէնց փողի համար էին եկել։

—Այո՛, բայց նրանք իրանց համար չէին խնդրում փողը։

—Հա՛, հա, հա, ի՞նչպէս չէ, այդ ես լսեցի, գիտեմ, սովեալների համար է. յաւիտենական պատրուակ, որովհետև աշխարհիս երեսին սովեալները երբէք չեն վերջանալ և եթէ ես սովեալներին սկսեմ ամեն օր փողեր բաժանել, վաղն ինքս պէտք է ողորմություն խնդրեմ. ՀՅ ԶՏԵ ՏԵՐՏՅ! շարունակեց Ֆոմա Արկադիեվիչը գրգռուելով. այսուհետև այդպիսիներին ուղղակի պէտք է դուրս անել։ ուրիշ ոչինչ. դրանք միայն մարդու աբիւն են պղտորում.

—Բայց արիւն չեն ծծում, ասաց աւելի գրգռուած Մարիամը։

Ֆոմա Արկադիեվիչը սաստիկ խայթոց զգաց, կարծես մէկը փայտով նրա գլխին

բագրութիւն է ժողովում։ Հայր Բունեաթեանցը եկեղեցում քարոզ է կարդում այդ բանի մասին և յայտնում, որ այդ տիրացուն առանց կոնսիստորիայի թոյլտուութեամբ է այդ բանն անում, հետևապէս թող ժողովուրդը չստորագրի, որովհետև ատեանը չի ընդունի այդ համախօսականը, աւելացնելով՝ որ մեզ այդպիսի քահանաներ հարկաւոր չեն, այլ «կրթուած» մարդիկ պէտք է «հրաւիրել» քահանայութեան համար։

Դեռ մէկ ամիս չանցած այս խօսքերը արտասանելուց՝ երեկ եկեղեցում գոռում է թէ՝ ոմանք «երազում են» քահանայացու հրաւիրել Ցիխիսի, Արցախի և ուրիշ տեղի դպրոցներից *) (սորա մէջն է, ի հարկէ, և Գէորգեան ճեմարանը)։ Ոչ, մեր քահանայացուն պէտք է «այստեղից» լինի. հիմնէք սեմինարիա և քահանայացուներ պատրաստէք»։ Լաւ էք ասում, արժ. հայր, միայն ափսոս որ շատ ուշ էք ասում։

Մինչդեռ հայր Բունեաթեանցը մի տիրացուի անարժան է համարում քահանայութեան և հրապարակաւ յայտնում է, թէ՝ «մեզ կրթուած քահանայ է պէտք», մէկ ուրիշ մարդու թղթերը, (Գ. Պօպ. որ անհամեմատ ստոր է այդ տիրացուից) առանց ժողովրդի գիտութեան, ուղարկում է Սինոդ, որ իրաւունք տայ հոգևոր կոչման մէջ ընդունուելու։

Այս բոլորը բաւական չէ, քարոզում էլի յանդիմանում է ժողովրդին, որ առանց հոգ տանելու, պատրաստելու կրթուած քահանաներ են ուզում. «Ցուցել էք, որ ուզում էք. առաջ պատրաստեցէք յետոյ պահանջեցէք»։ Այստեղ արժ. հայրը դարձեալ սխալվում է, որովհետև հանգ. Գէորգ կաթողիկոսը ճեմարանը շինելու համար մօտ 60,000 րուբ. հաշտարխանի եկեղեցիների դրամագլխից է ստացել, հետևապէս Գէորգեան ճեմ. սովորողները մասամբ հաշտարխանցիների շնորհն են վայելել և վայելում։

Երեկ արժ. հայրը յորդորեց հասարակութեանը, որ «ցենզաւոր» համալսարանական ուսուցիչներ բերել տան։ Լաւ է ասում, և շատ էլ լաւ կը լինէր, եթէ այժմեան «կոպարաւոր» ուսուցիչների տեղ համալսարանական ուսուցիչներ հրաւիրել։ Արժ. Բունեաթեանցը, որ երկար տարիներ դպրոցների հոգաբարձութեան անդամ է եղել, նախ պէտք է իմանայ, որ ուսուցիչ հրաւիրողը ոչ թէ հասարակութիւնն է, այլ հոգաբարձութիւնը, և երկրորդ՝ մեր ուսումնարանների համար համալսարանական ուսուցիչներն էլ բաւական են, «ցենզաւոր» խօսքն այստեղ տեղը չէր գործածել։

Առ հասարակ հայր Բունեաթեանցը հրապարակաւ ինչ բան որ սկսում է, կարծես յետոյ զղջում է և սկսում է գործը քանցնել, ինչպէս, երբ ստորագրութիւն ժողովող տիրացուի արարքը յայտնեց, ժողովրդից 40 հոգի յայտարարութիւն տուեցին կոնսիստորիային, որ ծխականների ժողով բանալու թոյլտուութիւն տայ քահանայացուների մասին խորհուրդ անելու, որ այսուհետև անպատրաստներն այլ ևս չգտնեն քահանայանալ։ Կոնսիստորիան երեք շաբաթուայ ընթացքում թոյլտուութիւն չտուեց, միայն երեկ հայ Բունեաթեանցը յայտնեց, թէ՝ շուտով կը գայ սրբազան Խորէնը և նա կարգադրութիւն կանի։

Եթէ կրթուած քահանայացուների մասին հոգ տանելը հայր Բունեաթեանցի սրտին մօտիկ հարց էր, մի՞թէ դրա համար ամիսներ է պէտք, որ կատարի ժողովրդի խնդիրը. մէկ շաբաթում չէ՞ր կարելի ժողով բանալու թոյլտուութիւն տալ։

Քաղաքացի։

***

ՄՈԶԴՈԿ, մարտի 5-ին.

(Թղթակցութիւն «Արձագանքի»)

—

Մինչդեռ Մոզդոկի հասարակութիւնն անհամբեր սպասում է որ հոգևոր իշխանութիւնը առանձին քննիչ ուղարկելով, քաղաքիս եկեղեցական գործերի խառնաշփոթ և վերին աստիճանի ողորմելի դրութեանը վերջ կը տայ, գործակալն ահա թէ ինչ քստմնելի միջոցների է դիմում։ Յունվարին հրաւիրուած, բայց չկայացած ժողովից յետոյ, որ արգելուել էր ոստիկանապետի միջամտութեամբ, ծխականները յանդիմանեցին գործակալին, առարկելով, որ եթէ իրաւ հարկ կար թոյլտուութիւն խնդրելու, նախ պէտք էր առնել այդ թոյլտուութիւնը և յետոյ միայն կանչել իրանց. գործակալն այս անգամ դիմում է ուղղակի նահանգապետին ամբաստանելով քանի մօտ ծխականներ, որոնք իբր թէ անկարգութիւններ են արել, հակառակ են եղել ժողովին ոստիկանութեան ներկայ լինելուն և թէ այդ մարդիկ յայտնի են վնասակար հայեացքներով. ամբաստանուածների մէջ կան և երեք ուսուցիչներ։ Նահանգապետից ոստիկանապետին հրաման է եկել քննութիւն անել. շուտով քաղաքում մեծ հարցուփորձ է սկսուելու, հարցափորձի են ենթարկուելու բացի ամբաստանուածներից և այն ծխականները, որոնք ներկայ են եղել այդ ժողովին, իբրև վկաներ։ Այս ամբաստանութիւնների շնորհիւ է, որ տեղւոյս քահանաներից մինը նահանգապետի դիմումով և Սինոդի կարգադրութեամբ անորոշ ժամանակով քահանայագործութիւնից արգելուած է, իսկ այժմ ամբաստանվում են ուսուցիչները, թէև սուտ, բայց այնու ամենայնիւ դպրոցի վրայ ստուեր է ձգվում։ Ցիշեալ գործակալի շնորհիւ այստեղ չեն թոյլատրվում ոչ ներկայացումներ, ոչ էլ բարեգործական նպատակներով երեկոյթներ, այն ինչ նահանգիս միւս քաղաքներում դրանք չեն արգելվում։

Մինչդեռ քաղաքիս հասարակութեանը մեծ նշանակութիւն են տալիս, նա տնտեսական պատճառներից չքաւորութեան մէջ ընկած հանրոյգուտ հասարակական կեանքի մասին շատ քիչ է մտածում. տարէց տարի քաղաքս դատարկվում է հայերից, որոնք ցրւում են ղազախների գիւղերը և նոդայների աւուլները և չարչիութեամբ են մի կերպով ապրուստ հայթայթում։

Անցեալ անգամ հաղորդել էի, որ հաշուետեսների յանձնաժողովը կոնսիստորիայից խնդրել է 1891 և 1892 թ. հաշուեմատեանները. տոկոսաբեր թղթերի վերաբերմամբ մթութիւնները պարզելու համար. բանից երևում է, որ 1888 թուից ըսկսած մինչև 1894 թուի վերջը ս. Աստուածամօր եկեղեցին մեծաքանակ կորուստներ է ունեցել, որ պէտք է հաղարներով հաշուել. հաշուետեսների մօտ գտնվում է մի շատ կարեւոր գօկումէնտ այդ հաստատելու համար։

Ազերբ.

***

Պ. Պ. Յ. ԼԷՎԻՆԻ և ԲԵԶԵԿԻՐՍԿՈՒ ՆՈՒԱԳԱՀԱՆԴԷՍՆԵՐԸ

—

Պ. պ. Լէվինի և Բեզեկիրսկու 3-րդ և 4-րդ նուագահանդէսները կայացան՝ երրորդը—Թիֆլիզի «Կրուժոկում», իսկ վերջինը—արքունական թատրոնում. Երկու երաժիշտները ևս դեռ շատ երիտասարդ են. առաջինը հազիւ 20 տարեկան լինի, իսկ միւսը 19-ի մէջն է։

Դժուար չէ երևակայել, թէ ինչ փայլուն ապագայ է սպասում երիտասարդ դաշնակահար Լէվինին, երբ Մոսկուայի երաժշտական դպրանոցը նոր աւարտած կրողանում մէջ հասկացող հասարակութեանը գրաւել իր նուրբ խաղով, մատերի մեքենայութեան զարմանալի զարգացումով և մտախոհ նուագախաղով։ Երիտասարդ դաշնակահարը գրաւեց մեզ թէ Ղումանի Carnaval երևելի նուագով, թէ Բալակիրեվի Jslamée աչքի ընկնող հեղինակութեամբ, որի նուագելն անհամար դժուարութիւններ է առաջ բերում. բայց Լէվինն այդ բանը այնպիսի դիւրութեամբ է նուագում, որ կարծես նրա համար դժուարութիւն ասած խօսքը երաժշտութեան մէջ գոյութիւն չունի։ Նոյնպէս խորին հասկացողութիւնով ու նրբութեամբ նա կատարեց Բեթհովէնի վարիացիաները, իսկ մեծ եռանդով ու կրակով—Զոպէնի էտիւդը op. 25 № 12. վերջապէս որ մէկը թուենք այն գեղեցիկ նուագներից, որոնցով համակրելի դաշնակահարը առիթ տուեց ոգևորուելու հասարակութեանը։

Բայց Լէվինի բազմակողմանի տաղանդը զգացմունքի կողմից դեռ բոլորովին բացուած չէ. մենք կարող ենք համեմատել նրան մի հրաշալի հազուագիւտ վարդի կոկոնի հետ, որին նայելիս դժուար չէ գուշակել, թէ որքան սքանչելի պիտի լինի այդ վարդը և թէ ինչպիսի քնքոյշ ու երկարատև բուրմունք պիտի տարածէ իր շուրջը—երբ որ բոլորովին բացուի։ Այս ամենից յետոյ մեզ հասկանալի եղաւ, թէ ինչու հանգուցեալ Անտոն Ռուբինշտէյնը, անցեալ տարի հետևեալ նշանաւոր խօսքերն էր ասել տաղանդաւոր Լէվինին. «Այժմս իմ տեղը դաշնամուրի առաջ ձեզ պիտի գիջանեմ»։

Ջութակահար Բեզեկիրսկին զարմացրեց մեզ իր նշանաւոր տեխնիկայով. նրա ջութակը իր մեղմ ու գեղեցիկ տոնով մեծ բաւականութիւն պատճառեց ունկնդիրներին։ Մանաւանդ գեղեցիկ նուագեց պ. Բեզեկիրսկին Վենիավսկու «Պոլոնէզը» և Ղումանի «Fäumerei» հեղինակութիւնը։

Երկու երաժիշտները ևս վարձատրուեցին բուռն ծափահարութիւններով և ստիպուած էին հասարակութեան պահանջմամբ՝ պրոգրամից դուրս շատ ու շատ կտորներ նուագել։

Ինչպէս լսեցինք դաշնակահար Լէվին նը գնալու է առաջիկայ սեպտեմբերին Բերլին, որտեղ պիանիստների մրցումը է լինելու. մրցանակ տանողը կըստանայ 5 տարի շարունակ 4000 մարկ (2000 ռ. մօտաւորապէս) տարեկան, իր տաղանդն աւելի կատարելագործելու համար։ Ցանկանում ենք յաջողութիւն տաղանդաւոր երաժշտին։

Պէտք է ափսոսալ, որ մեր հասարակութիւնը բաւականին անտարբեր վերաբերուեց դէպի այս երկու նշանաւոր երաժիշտները, որոնք արժանի էին աւելի մեծ ուշադրութեան։

Պրգ. Բ.

***

Ամսոյս 8-ին Թիֆլիզի արքունական թատրոնում կայացաւ օպերային ընկերութեան առաջին ներկայացումն։ Փաուստ օպերան և Բիզօլստէօֆց տեսարանները անցան բաւական յաջող։ Թիֆլիզի բեմի վրայ պ. Վարդիկեանը առաջին անգամն է դուրս գալիս ամբողջ տեսարաններու և Փաուստ երգեց յաջողութեամբ, այնպէս որ հասարակութիւնը վարձատրեց ծափահարութիւններով։

ՄԱՄՈՒԼԻ ՏԵՍՈՒԹԻՒՆ

*** «Բազվեդչիկ» լրագիրը խօսելով Կովկասի ռուս-տաճկական սահմանագծի մասին ասում է.

«Մեր Կովկասեան-տաճկական սահմանը ամենաանհանգիստ և վտանգաւոր տեղերից մէկն է համարվում, ոչ թէ այն պատճառով որ այնտեղ մեծ զումարների մաքսանենգութիւն է լինում, այլ որովհետև այդ մաքսանենգերը յանդուգն և պատերազմասէր թափառաշրջիկ քրդերն են, որոնց համար աւազակութիւնն արհեստ է և որից միայն կախուած է նրանց կեանքը և բարեկեցութիւնը։ Նրանք գրեթէ ամենքն էլ ձիաւոր են և լաւ զինուած են արագաձիգ հրացաններով։ Դրանք շատ անգամ անպատիժ պարապում են իրենց արհեստով, իսկ մեր թոյլ պահականոցները չեն կարողանում այդ աւազակների ետևից ընկնել»։

«Բազվեդչիկին» երևի յայտնի չեն Ուջարի կայարանի աւազակները։

*** Բագուի «Կասպիյ» լրագիրը միացնելով իր ձայնը Կովկասեան մամուլի ձայնին, ցաւակցութիւն է յայտնում Թիֆլիզի քաղաքագլուխ Պ. Իզմայլեանի մահուան առթիւ. նրա Թիֆլիզի թղթակիցը ի միջի այլոց գրում է հետևեալը.

Թիֆլիզեցիների արտայայտած վիշտը ճշմարիտ իսկական վիշտ է և այդ վիշտը ՀՕՇԱՓՈՒՄ է ոչ միայն նրա բարեկամներին այլ և թշնամիներին, որոնք չկարողացան վայելուչ յարգանք չցոյց տալ այդ նշանաւոր հասարակական գործչի, որի փոխարէն նորը գտնելը չափազանց դժուար կը լինի»։

Բայց իր թղթակցի այդ տողերը տպագրելուց յետոյ «Կասպին» այնքան աչք չի ունեցել որ նոյն համարում տպագրել է մի ինչ որ Ա. Դ.-ի բարբանջանքները հանգուցեալ Իզմայլեանի մասին, որին՝ մի քանի համեմատ կոմպլիմենտների հետ խառն հետևեալ խօսքերն է ուղղուած.

«Ի հարկէ Իզմայլեանի գործունէութեան մէջ կային շեղումներ. . . և մեծ շեղումներ (промахи. . . и крупные промахи)»։

Բայց ինչպէս երևում է նաև թէ համը տեսած յօդուածագրի նկատած շեղումը հէնց այն է որ — ինչպէս այդ յօդուածի մէջ ևս յիշվում է— երբ Իզմայլեանին առաջարկեցին թողնել իր պատուաւոր հասարակական դժուար պաշտօնը և յանձն առնել մասնաւոր առևտրական ձեռնարկութեան կառավարչի պաշտօնը, անհամեմատ աւելի մեծ ռոճկով, նա չհամաձայնուեց։

Կասկած չկայ որ նաև թէ այն գործակատարների կարծիքով այդ բաւական «մեծ շեղումն է»։

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՀՕՀՊԱՂԻ ԿԱՐՄԻՐ ԱՒԵՏԱՐԱՆԸ

ԱՒԱՆԴՈՒԹԻՒՆ

—

Հահպաղ Վանի շրջակայքի ամենէն զմայլելի վայրերէն մին է, իր հնութեամբը նշանաւոր։

Վանի հիւսիսային արևելքը, բլրակներու լայն կուրծքին վրայ նաղելաշուք խաթունի մը պչրանքով բաղմող հպարտ այս դաստակերտը իր հովասուն դիրքով, իր արգաւանդութեամբ, մանաւանդ կարմրափայլ գինով մեծ անուն ու մեծ յարգ վայելեց կարմրին սիրահար ժողովրդին մէջ։ Ջանազան կողմերէ բուսարդեղ հարսեր ու աղջիկներ, կարմրայտ երիտասարդ ու պատանիներ, կորովի ծերունիներ եկան բնակութիւն հաստատելու այն հողերուն վրայ, ուր ամեն բան իր կարմրութիւնն ունէր, մանաւանդ աղջիկն ու գինին։

Կարմիր գոյնը այս գիւղաքաղաքին խորհրդանշանը եղաւ։

Դարեր գլորուեցան, կրօնքներ փոխուեցան. կարմիր բլրակներու բարձունքին վրայ հրաշունչ, հրաբորբոք ատրուշաններու կարմիր բոցերը մարեցան, կարմրագեստ քուրմերը տեղի տուին սևաչքեմ կղերականներու, սակայն ժողովրդին իտէալը, կարմիրը չփոխուեցաւ։ Կարմրագեղ, ոսկիամայր Անահիտին փոխանակեց Քրիստոսի կարմիր արիւնով ներկուած խաչը, կարմրագիր մեհենական գիրքերուն յաջորդեց Յիսուսի տնօրինութեան պատմագիրքը։ Աւետարանը, որ նոյնպէս կոչուեցաւ Կարմիր Աւետարան։ Նոր կրօնը նուիրագործեց հին կրօնի խորհրդանշանը։

Երբ պարագաները այս կարմրագեղ այգեստաններու ծիրանաթոյր ու ծիրանազգեստ բնակիչները դէպի հեռաւոր երկիրներ փոխադրեցին, հաւատաւոր գաղթականներէն մին, իր բնակավայրի նուիրական մատեանը, Կարմիր Աւետարանը փաթթելով կարմիր շուշափներու մէջ՝ իր կուրծքի վրայ կը պահէր գիշեր ու ցերեկ։ Բնակութիւն հաստատելով Արտոս լեռներու արտասուքի ճամբաներու եզերքը, կրոնակը այդ ամեհի պահնորդներուն տուող ու սորի մը մէջ սորացող Սորի գիւղին մէջ, կ'ապրէր իր սրտի պաշտելիին հետ, ու անով կը մխիթարէր իր բաղդակիցները։

Երբ գաղթականի—պառաւ մամիկ մը—արևը իր վերջալուսի վերջին ճառագայթներուն հետ կը խաղար, բարեպաշտուհին իրեն պաշտելի մասունքը իր կարմիր ծածկոյթներովը դրաւ բրտաշէն կարմիր հողէ պատուկի մը մէջ, թաղեց իր բնակած տան անկիւնն ու հանգիստ սրտով աւանդեց իր հոգին։

Ժամանակներ կը փոխուին, գաղթականներու թոռները կը դառնան իրենց նախկին բնակավայրը, սակայն Կարմիր Աւետարանի աւանդութիւնն ու անոր հրաշքներու պատմութիւնը միայն կը տանին հետերնին, խառն կրակէ հառաչանքներու ու կսկիծներու հետ։ Նախախնամութիւնը վերջապէս կը գթայ այս անմխիթար ժողովրդին վրայ. կարմրագեղ կոյս աղջկան մը երազին մէջ կարմիրներով զարդարուն, կարմրախայտ ձիու վրայ նստած, կրակէ ճիպոտը ձեռքը ծաղկահասակ կին մը կ'երևի, կը յայտնէ ծածկեալ սրբութեան տեղը, և իր հաւատքը վարձատրելու համար կը պատուիրէ որ այդ նուիրական մատեանը ժառանգաբար իրենց տունը պահուի։

Երազատես աղջկան եղբայրը Արտասայ ստորոտները երկար թափառելէ ետք, աւերակի մը մէկ անկիւնը կարմրափետուր աքաղաղ մը կը նշմարէ, որ իր ականջ խլացնող աղաղակներով, առանց հաւերու տարմի, քճէճ կ'ընէ։ Գեղճուկը նախախնամական նշան համարելով խօսնակի այդ սաստիկ կանչը, քճճած տեղը կը փորէ, կը փորփրէ, և ահա երևան կ'ելնէ կարմիր պտուկը իր թագուն գանձովն ու անաղարտ շուլփաներով, որոնց վրայ փիլաքները կը փէլկտային տակաւին։ Մեծ ուրախութեամբ իր գիւղը կը դառնայ, կարմիր սնտուկի մը մէջ գետեղելով, առջևը միշտ վառ կը պահէ ձէթի ճրագի բոցավառ պատրոյգը։ Այսպէս կարմիր սրբուհիին յայտնուած կարմիր կողերով սուրբ գիրքը կը վերակոչուի Կարմիր Աւետարան։

—

Կարմիր Աւետարանի հրաշքներու աւանդական պատմութիւնը դեռ կենդանի կը մնայ ժողովրդի մէջ։ Տարուան բոլոր եղանակներու մէջ, քաղաքէն ու գիւղերէն շատ մը բարեպաշտներ, ցաւագարներ, խելագարներ, լուսնոտներ ուխտի կը դիմեն Ջերմ հաւատքով ու կը գտնեն բժշկութիւն։ Մամիկը իր լաչաքի ճոթը ծրարաց լումաները, հարսն ու աղջիկը իր ճակտի զարդերէն մին, ուրիշ մը իր ձեռքով մանած կաժերով պատրուգցուն, գեղջուկը քանի մը նուկի ձէթ, այլ ոմն իր թանկագին թաշկինակը, հարուստը իր թուխ մաքին կամ ճանոցէն մի քանի ոսկի, աղքատը իր հաւը կամ աքաղաղը կը նուիրեն այս սուրբ Աւետարանին, ու կը հասնին իրենց սրտի փափաքին։

Բնականաբար այսպիսի հասոյթ մը պիտի գրգռէր կղերականներու արծաթ-սիրութեան նախանձը, ուստի անգամ մը Վանի հռչակաւոր առաջնորդական տեղապահը, անսալով իրեն շրջապատի շահախնդիրներու խորհրդին, Կարմիր Աւետարանը քաղաքի Սուրբ Նշան եկեղեցին փոխադրեց. սակայն գիւղացիներու բուռն բողոքներուն ընդդիմադրել չկրնալով, դարձեալ իր տեղը դարձուց եկեղեցին մէջ պահել պատուիրելով։

Հիմա այդ Կարմիր Աւետարանի հասոյթներէն մաս մը կը տրուի այդ մատեանին երբեմնի տիրոջ, որուն տունը Աւետարանի տուն կը կոչուի, որուն սերունդէն միայն մէկ արու ողջ կը մնայ սեռը յարատևելու համար, մնացեալ հասոյթները եկեղեցիին ու քահանաներուն կը պատկանին։

Աւետարանը գրչագիր է, մաքուր մագաղաթի վրայ. տասներեքերորդ դարու գրչագիր է։ Գրիչը անծանօթ է։ Գրչագրութիւնը գեղեցիկ է։ Գրչագրի ոճը՝ ոսկեգիր։ Գրչագրի ոճը՝ ոսկեգիր։ Գրչագրի ոճը՝ ոսկեգիր

դարուն գործ կը կարծուի։ յիշատակարան մը ունի, լուսանցքի վրայ իւրաքանչիւր գլուխներու մօտ նկարէն ծաղիկներ կան։ Ֆան գլխատառերը կարմիրով գրուած են, կողերը կարմիր կաշեպատ։

Բայց մխիթարիչ Կարմիր Աւետարանը չէ որ ուխտաւորներու հոծ բազմութիւնը կը քաշէ Երեն։ Նոյնչափ հրաշագործ է նաև Բաղոսի խորանը։ Ամեն դասակարգի մարդիկ տարին քանի մը անգամ պէտք է որ լեցուն քսակով երկրպագութեան երթան Կարմիր Աւետարանէն աւելի ախորժելի, աւելի հին բժիշկ կարմիր նեկտարին, ու պարտէզներու հովասուն ուռենիներուն տակ կատարելով իրենց պաշտամունքը պարապ քսակով տեղերնին դառնան։ Եթէ մարդ մը ձահպղի երթայ ու առանց գինովնալու ետ դառնայ, մեծ նախատինք է թէ այցելուին և թէ այցելութիւն ընդունողին, մանաւանդ հիւրընկալին։

Ղ.

(«Հայր.»)

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԳԵՐՄԱՆԻԱ։ — Գերմանիայի ներքին տնտեսական դրութիւնն այնքան զգալի ճգնաժամի մէջ էր մինչև այժմը, որ նա արտաքին քաղաքականութեամբ շատ չէր զբաղուիր, բացի այն փոքրերից, որ շարունակ Վիլհելմ կայսրն անում է Ֆրանսիայի հետ բարեկամանալու համար։ Բայց Վերդէր դեսպանի յետ կանչելը և նրան պաշտօնից արձակելն արդէն մասամբ ցոյց է տալիս, թէ ինչ փոփոխութիւններ կըլինին Գերմանիայի արտաքին քաղաքականութեան մէջ։ Հիւսիսային գործակալութեան նախկին հեռագրներից յայտնի է որ Վերդէրը շատ յարգուած էր Պետերբուրգում և մնաք բարովի այցելութեան ժամանակ մինչև անգամ արժանացաւ «Ընդրէյ Պէրվոզվանին» շքանշանին։

ՖՐԱՆՍԻԱ։ — Այժմ երբ ֆրանսիական նաւերի Կիլ ուղարկուելը վերջնականապէս վճռուած է, ֆրանսիական մի քանի լրագրներ հարց են տալիս թէ արդեօք Ֆրանսիան սխալ չգործեց ընդունելով Գերմանիայի հրաւէրը և թէ արդեօք դրա հետևանքները Ֆրանսիական հայրենասիրութեան համար վնասակար չէն լինի։ Այդ առիթով «Soleil»-ը ասում է. «Վիլհելմ կայսրը վճռել է, ինչպէս երևում է, գրաւել մեր սիրտը և մեզ հետ սերտ յարաբերութիւններ սկսել։ Իսկ եթէ նա մի բան ցանկանում է, հաստատ է ցանկանում։ Մի խօսքով մենք պատրաստվում ենք Գերմանիայի հետ լաւ բարեկամներ լինելու։ Դրա դէմ մենք ոչինչ չէինք ունենալ ասելու, եթէ միայն հնար լինէր պատմութիւնից պոկել մի երես»։ Կասկած չկայ որ Ֆրանսիական լրագրի յիշած երեսն այն երեսն է, որի մէջ գրուած է գերմանացոց յաղթութեան և Ֆրանսիայի պարտութեան պատմութիւնը։

«ԱՐԶԱԳԱՆՔԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

«ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՀԵՌԱԳՐԱԿԱՆ» ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

Մարտի 10-ից.

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ — Կայսրուհի Մարիա Ֆէօդորովնան ուղևորուեց Դանիա, ուր կըմնայ կարճ ժամանակ։

«Նովոստին» հաղորդում է թէ թոյլ է տրուած երկաթուղի շինել Յարէցինից մինչև Տիխորեցկ։

Առևտրական ապրանքների պահեստների վրայ հարկ մտցնելու ծրագրի գործադրութիւնը մերժուած է։

ԽԱՐԿՈՎ։ — Երկրորդ փոխադարձ վարկի ընկերութեան անդամների ընդհանուր ժողովը վճռել է 4000 ռուբլի յատկացնել այստեղ Ազեքսանդրը III կայսեր արձանի համար։

ԲԵՐԼԻՆ։— Հրատարակուած է որ Վերդէրը (Պետերբուրգի գերմանական) դեսպանը յետ է կանչվում և արձակվում է պաշտօնից։

Պրուսական պետական խորհրդի նիստերը փակուեցին կայսեր ճառով, որի մէջ նա ասաց որ թէև վիճաբանութեան հետևանքները սպասուածին չափ բաւարար չեն, այնու ամենայնիւ որոշուած է թէ կառավարութիւնն ինչ միջոցներ պիտի ձեռք առնի գիւղատնտեսական դրժուար դրութիւնը ոչնչացնելու համար։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՈՐՍԱՆ

Մարտի 10-ից.

Վեքսէլի կուրս 3 ամսով։

Լօնդոնի վրայ 10 ֆ. ստ.	93,00
Բերլինի վրայ 100 մարկ	45,40
Փարիզի վրայ 100 ֆր.	36,77½
Նոր կարճ պօլուիմպերիալներ	7,40 ֆռ. 7,42 վաճ.
Բօրսայի զեղջը	5-ից 7%
4% Պետակ. արժեթղթ.	99¾
5% ոսկ. արժեթ. 1894 թ.	164
5% Առաջ. ներքին փոխ. խաղատոմս 1864 թ.	236
5% Երկր. ներք. փոխառ. խաղատոմս 1866 թ.	225¼
5% Ճանուակ. հող. բանկի գրաւակ. խաղատոմս	211
5% Պետակ. երկաթուղ. արժեթուղթ	101⅜
4% Ներքին փոխ. I սեր.	99½
„ „ „ II „	99½
„ „ „ III „	99½
„ „ „ IV „	99½
4½% փոխ. 1893 թուի	101⅞
„ փոխ. 1 հրատարակ.	101⅜
„ փոխ. 2 հրատարակ.	101⅜
4½% Գրաւակ. արժեթղ. ազն. հողային բանկի	101⅜
4½% Գիւղական հողային բանկի վկայաթղթեր	149½
5% Ս. Պետ. քաղ. վ. ընկ.	102
„ „ Մոսկուայի.	102
5½% Օդեսայի	100⅜
5% Թիֆլիզի	99¾ ֆռ.
5% Գրաւակ. արժեթ. հող. բանկերի Խարկովի	100⅓
„ Պոլտավայի	100
„ Տուլայի	100¼
„ Կիեվի	100¼
„ Մոսկուայի	101½
„ Բեսարաբիայի	100
„ Ներքին-Նամարայի.	100¼
„ Դօնսկոյ.	100
„ Վիլենսկի	100
6% և 5% Քուլիցիսի.	101 և 99½ ֆռ.
„ Թիֆլիզի	101 և 99½ ֆռ.

Խմբագիր-Հրատարակիչ՝
ԱԲԴԻԼ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ Բ. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆԻ

(Կուկիա, Վօրոնցովի արձանի հանդէպ)

Հիւանդներին ընդունում են ամեն օր, բացի կիւրակի օրերից.

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ՝

Բ. Ա. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան սէնիլիսի և վեներական հիւանդութիւնների։

Կ. Մ. ՀԻՒՈՎԱՆԻ—9—10 ժ. աչքի ներքին և նեարդային հ.

Դ. Ֆ. ԲՈՒԴԿՈՎՍԿԻ—10—11 ժամը ներքին, երեխայոց և կանանց հ.

Կին-բժիշկ ՏՈՒՐԲՈՎԻՉ—11—12 ժ. կանանց հ.

Ի. Ֆ. ՊՐՕՏԱՍՍԵՎԻՉ—12—1 ժ. կանանչի, կոկորդի, քթի և կրծքի հ.

Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—1—1½, ներքին և երեխայոց հ.

ԵՐԵԿՈՆՆԵՐԸ՝

Ա. Գ. ԳՈՒՐԿՈ—6—7 ժ. սիֆիլիսի, մէզի ու սեռական օրգանների հ.

Բ. Ա. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ—7—7½ ժ.

Ա. Գ. ԴՈՒՐԿՈ քիմի-խոշորացուցական հետազօտութիւն է անում մէզի, խրխի, արեան, կաթի և այլն։

Վճար 50 կ.։ Համախորհրդի (կոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։

Հիւանդանոցումը ընդունւում են և ԴԻԷՏԵՏԻԿ ՀԻՒԱՆԴՆԵՐ։

Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ Նառատարեան։

ԲԺՇԿԱԿԱՆ ԸՆԴՈՒՆԱՐԱՆ

ԲԺՇԿ. ԴՈԿՏՕՐ

ԱԻԵՏԻՔ ԲԱԲԱՅԵԱՆԻ

Սօլօլակ, Սերգիևսկի փողոց № 14.

Բացի դեղերից գործադրվում են նաև զանազան տեսակ ՋՐԱԲՈՒԺԱԿԱՆ, ԵԼԵԿՏՐԱԲՈՒԺԱԿԱՆ և այլ ֆիզիքական մեթոդներ։

ՆԵՐՔԻՆ և ՆԵԱՐԴԵԱՅԻՆ ՀԻՒԱՆԴՆԵՐ

ընդունվում են ամեն օր (բացի կիւրակի և տօն օրերից)

12½—1½ ժ. ցերեկը } կինարմատներ և երեխաներ

1½—2 ը ժ ցերեկը և 7-ին մօտ երեկոյեան } տղամարդիկ։

Ընդունարանում գտնվում են որոշեալ ժամերում մանկաբարձ — մասսաժանող կին և մասսաժիստ պարոն։

Քաղաքային հիւանդանոց

(Մուխրանեան փ., տ. Կուզանեանի, № 15. հիմնել են Թիֆլիզի քաղաքացիները երեխեկ հիւանդների համար 1866 թ. ապրիլի 4-ի յիշատակին)։

Հիւանդների ընդունելութիւն ամեն օր, բացի կիրակի օրերից, ձմեռն առաւօտեան ժամը 9—1, ամառը (յունիսի, յուլիսի և օգոստոսին) առաւ. ժամը 8—12.

Վ. Մ. Աջիրով — ներքին, երեխանց և ջղային հիւ. ժամը 10½—12 ամեն. օր։

Ե. Ա. Ղազարեանց—ներքին և երեխանց, ժ. 10½—12 ամեն օր։

Գ. Գ. Գուլուլեանց—խիրուրգ. և մէզի անդ. ժ. 12—1 ամեն օր։

Բ-ժ. Գ. Քաղաքեանց. սիֆիլիս և մէզի անդ. հիւանդ. 11—12 ամեն օր։

Մ. Ա. Մէլիքեան—ներքին և վեներական, ժ. 12—1 ամեն օր բացի հինգշաբթի։

Բ-ժ. Մ. Զահվերդեան—ներքին հիւանդութիւն. 12—1 ամեն օր։

Բ-ժ. Դեղալեն — ներքին և երեխանց հիւանդ. 12 1 ամեն օր։

Կին-բ-ժ. Մ. Ա. Խաչատրեանց—կանանց ժ. 9—11 ամեն օր։

Ն. Գ. Կառաբեան — ներքին և երեխանց, ժամը 11—12 ամեն օր։

Կին-բ-ժ. Լ. Ե. Մաքսիմովա—կանանց, ժամը 11—12 ամեն օր։

Ե. Ա. Ռոստոմով—ներքին, երեխանց և ատամի, ժամը 9—10 ամեն օր։

Մ. Ա. Ռեիդրոնէ—ներքին և ջղային, ժամը 11—12 ամեն օր։

Գ. Ն. Սարգսեան—ներքին, մէզի անդ. և վեներական, ժամը 12—1 ամեն օր։

Գ. Ա. Թարխանեան — ներքին և խիրուրգ., ժ. 12—1 ամեն օր։

Կին-բ-ժ. Ս. Ա. Զիլոց—աչքի և կանանց, ժամը 12—1 ամեն օր։

Ատամ. հոյժ Ա. Օ. Օքբէլի—ատամներ, ժամը 10—11 ամեն օր։

Կոնսուլտասիոնը երեքշաբթի և ուրբաթ օրերը ժ. 12—1. Ծաղկի պատուաստումն—չորեքշաբթի և շաբաթ օրերը ժամը 9—1։

ՀԱՒԼԱԲԱՐԻ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐ

(Կախէթինսկայա փ., տ. Տէրտէրեանի)

Մ. Ա. Քալանթարեան—ժամը 11—12 ամեն օր։

Կին-բ-ժ. Մ. Ա. Խաչատրեան—կանանց, ժ. 11—12 երեքշաբթի և ուրբաթ օրերը

ԹԱՐԳՈՒԻՒԻ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ

(Բաննիա վօրօտա, տ. Էնֆիաճեանի)

Գ. Բ. Տէր-Աստուածատուրեան—ժամը 11—12 ամեն օր։

Կին-բ-ժ. Մ. Ա. Խաչատրեան—կանանց, ժ. 11—1 երեքշաբթի և ուրբաթ օրերը։

Ծանօթութիւն.—Հարուստ անձերին բըժշկական խորհուրդ և դեղեր տրւում են ձրի։

Քաղաքային բուժարանի կառավարիչ՝—
Գ. ՍՏԵՓԱՆԵԱՆ

Ընդրկովկասեան երկաթուղի

Մարդատար գնացքը Թիֆլիզից Բաթում գուրս է գնում առաւօտեան ժ. 9-ին 30 ր. և Բաթում հասնում է երեկոյեան ժ. 9-ին 45 ր.։

Փոստային գնաց.քը Թիֆլիզից Բաթում գուրս է գնում ցերեկուայ ժ. 1-ին 10 ր. և հասնում է Բաթում առաւօտեան 7 ժ. 30 ր.։

Փոստային գնաց.քը Թիֆլիզից Բաթում գուրս է գնում երեկոյեան ժ. 6-ին 50 ր. և Բաթում հասնում է առաւօտեան ժ. 8-ին 15 ր.։

Մարդատար գնաց.քը Բաթումից Թիֆլիզ գուրս է գալիս առաւօտեան ժ. 9-ին 40 ր. և Թիֆլիզ հասնում է երեկոյեան ժ 9-ին 55 ր.։

Փոստային գնաց.քը Բաթումից Թիֆլիզ գուրս է գնում գիշերուայ ժ. 11-ին 20 ր. Թիֆլիզ է հասնում ցերեկուայ ժ. և 12-ին 25 ր.։

Փոստային գնաց.քը Բաթումից Թիֆլիզ գուրս է գալիս գիշերուայ ժ. 11-ին 5 ր. և Թիֆլիզ հասնում է ցերեկուայ ժ. 5-ին 50 ր.։

Ապրանքա-մարդատար գնաց.քը Թիֆլիզ Գանձակ գուրս է գնում երեկոյեան 7 ժ. 27 ր. հասնում է Գանձակ առաւօտեան 7 ժ. 40 րոպէին։

Ապրանքա-մարդատար գնաց.քը Գանձակից Թիֆլիզ գուրս է գալիս երեկոյեան 6 ժամին. հասնում է Թիֆլիզ առաւօտուայ 7 ժ. 35 րոպէին։

ՓՈՍՏԱՅԻՆ ԵՐԹԵՒԵԿՈՒԹԻՒՆԸ ԶՐՈՑ ՊՈՏԵՐԱԶՄԱԿԱՆ ՃԱՆԱՊԱՐՀՈՎ

Թիֆլիզից՝ հինգ հոգու տեղ ունեցող կառքը ուղևորվում է առաւօտեան 8 ժամին, գիշերում է Մլէթի կայարանում, Վլադիկավկազ է հասնում հետևեալ օրը ժամը 7-ից մինչև 8 երեկոյեան։

Վեց հոգու տեղ ունեցող հանրակառքը (օմնիբուս) ուղևորվում է կէսօրից յետոյ ժամը 3-ին և առանց գիշերելու տեղ է հասնում Վլադիկավկազ հետևեալ օրը ժամը 7-ից մինչև 8-ը երեկոյեան։

Վլադիկավկազից՝ հինգ հոգու տեղ ունեցող կառքը ուղևորվում է առաւօտեան ժամը 8-ին, գիշերում է Մլէթի կայարանում, Թիֆլիզ է հասնում հետևեալ օրը ժամը 7-ից մինչև 8 ժամը երեկոյեան։

Վեց հոգու տեղ ունեցող հանրակառքը (օմնիբուս) ուղևորվում է կէսօրից յետոյ ժամը 3-ին և առանց գիշերելու հասնում է Թիֆլիզ հետևեալ օրը ժամի 7-ից մինչև 8 ժամը երեկոյեան։

ՑԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Ամսոյս 12-ին, կիրակի, առաւօտեան 12 ժամին, ս. պատարագից յետոյ նշանակուած է ՄՈՂՆՈՒ Ս. ԳԷՈՐԳ ԵԿԵՂԵՑՈՒ եռեցփոխանի և երեք հաշուատեսների ընտրութիւն. ուստի սորանով խընդրում եմ յիշեալ եկեղեցու ծխականներին նշանակեալ օրը և ժամին ներկայ լինել նոյն եկեղեցում ընտրութեան մասնակցելու։

Գործակալ եկեղեցւոյ Հայոց առաջին մ. Տփխիսի

Գիւտ տոհ. Աղանեանց։

2—2

ԿԻՆԲԺԻՇԿ

Ա. Ի. ՇՂԵՐԲԻՆԻՆԱ

Ընդունում է հիւանդներին ամենայն օր առաւօտեան 10 ժամից մինչև 12-ը և երեկոյեան 6—7-ը։ Գօլովինսկի Պրոսպեկտ տուն Ալելովի։

Լոյս տեսաւ

ՍԱՐԿ. Յ. ՃՈՒՂՈՒՐԵԱՆԻ

«ՄՈՌԱՅՈՒԱԾ ԱՇԽԱՐՀ»-Ի

Ա. և Բ. գրքերը։ Վաճառվում են կենդր. և Կովկասեան գրավաճառանոցներում, Մակար 2մշկեանի և ինձ մօտ։

Ա. գիրքն արժէ 60 կոպ. Բ. 50 կ., միասին 1 ռուբլի։ Մինիայն Ա-ից գնողներին հարիւրին զիջվում է 30%
երկրորդին 20%

Հասցէս՝ Тифлисъ, Николаевская ул., д. Алелова № 10.

3—2 Սարգ. Յ. Ճուղուրեան։

Լոյս տեսաւ

ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿԻ ՊԱՏԿԵՐԸ

Զարդարած վեց նշանաւոր կաթողիկոսներով և ծաղկապսակներով զեղեցկացրած։

Նոյն գիրքով ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆՈՒ պատկերը վեց նշանաւոր գործիչներով շրջապատած։ Երկու պատկերը միասին ճան. ծախքով արժէ 1 ռուբլի, փողը կանխիկ ուղարկել։ 25 օրինակից մինչև 100 օր. առնողին հարիւրը 25 ռուբլի ճան. ծախքով։ Գումարով պահանջողները փողի ⅓ մասը պէտք է ուղարկեն պահանջի հետ միասին։

Հասցէս՝ Въ Баку, Чадровая улица, домъ № 110.

А. А. Оганесянцу.

(3—3)

«ՆՈՐ ՁԱՆԱՊԱՐՀԻ ՎՐԱՑ»

ՎԷՊ Մ. ԽԱՏԻՍԵԱՆԻ

Դինն է 1 ռուբլի։

Դասվում է կենդրոնական և խիդեկելի գրավաճառանոցներում։ Նոյն տեղերում ծախւում է և «Փեսայ որսողներ» վէպիկը։ Գաւառացի ցանկացողները կարող են դիմել կենդրոնական գրավաճառանոց։

(5—5)

ԲԱԳՐԱՏ ՕՅՎԱԶԵԱՆՑԻ

աշխատասիրած

I. «ԱՆԻՒ ԿՈՐԾԱՆՈՒՄԸ» պատմական վէպ 11-րդ դարու և II. «ՏԱՆՋԱՆԲԻ ԲՈՎԻՑ» վէպ իրական կեանքից։ Երկու գրքի բաժանորդագրին է մէկ ռուբլի. տպագրուելուց յետոյ գինը կը բարձրանայ։

Դիմել՝ Тифлисъ, Баграту Айвазянцу, Эчміадзинская улица № 20 կամ կենդրոնական գրավաճառանոց։

(3—2)

ԿԵՆԴՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ

վաճառվում են հետևեալ նոր հրատարակութիւնները.

1) Խուլ Խաչիկ, Քամալեանի . 25 կ.
2) Փէրիզադէի երգը, Ա. Այնօր 25 »
3) Ղարիբ մշեցի, Ա. Քէ.-ի. . 10 »
4) Տարերք բնագիտութեան, Հուքսլէյի, օժանդակ ձեռնարկ ազգ. դպրոցների համար, թարգմ. Խ. Յար. . 40 »

ՆՈՐ ԼՈՅՍ ՏԵՍԱԾ

5) Վահան Մամիկոնեան, Յ. Ճարաբէգեանցի. . . . 40 »

(3—2)

ԹԻԹԼԻԶԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐԿԻ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ

կանոնագրի 69 §-ի հիման վրայ ներկայիս յայտնում է որ պ. պ. հաւատարմատարների պարելիք ընդհանուր ժողովը նշանակուած է սոյն 1895 թուի մարտի 25-ին, առաւօտեան 10 ժամին Քաղաքային խորհրդի դահլիճում (մուտքը Վելիամինովսկի փողոցից է)։

ՊԱՐԱՊՄԱՆՑ ԱՌԱՐԿԱՆԵՐԸ

1) Վարչութեան ներկայացրած 1894 թուի հաշուի քննութիւնը և հաստատութիւնը.

2) Վերաստուգիչ մասնաժողովի զեկուցումը 1894 թուի հաշուի քննութեան մասին.

3) 1895 թուի ծախսերի նախահաշուի քննութիւնը և հաստատութիւնը.

4) Ընկերութեան վարչութեան 1894-ի գործունէութեան զեկուցումը.

5) ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ. ա) Հերթով, համաձայն §§ 45 և 56 ընկերութեան կանոնագրի, դուրս եկող՝ Վարչութեան նախագահ Անտ. Սոլ. Ղորղանեանի և վերահսկող մասնաժողովի անդամ Ա. Ի. Տէր-Գրիգորեանի և Ա. Մ. Թամամշեանի. բ) Վարչութեան երկու փոխանդամների. գ) Ընկերութեան գանձապահի ի տեղի ժամանակի լրանալու պատճառով դուրս եկող Ն. Թ. Տիզրանեանի և դ) Վերաստուգիչ մասնաժողովի երեք անդամների։ (1—1)

ԹԻՖԼԻԶԻ ԲԱՂԱԲԱՅԻՆ ՎԱՐԿԻ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ

այսու յայտարարում է, որ նրա բնակարանում, Երևանեան Հրապարակի վրայ նախկին Տէր-Աստուրովի տանը, սոյն մարտի 15-ին, շէրեթաթ ժամը 12-ին կը կայանայ աճուրդ երկու կալուածների վաճառման, որոնք մնացել են Ընկերութեան վրայ. դրանցից առաջին կալուածը պատկանում է Խաչատուր-Էնէ Ահարոնեանի Զիլանուշուն և կազմուած է մի կտոր հողից 27½ քառակուսի սաժէն, նրա վրայի երեքյարկանի տնով, որ գտնվում է Թիֆլիզի 5-րդ քաղաքամասում Փոքրնոյ փողոցի վրայ № 12. 2-րդ կալուածը, որ պատկանում է Մարիա Յովհաննիսեան Զահրաբեանցին, բաղկացած է մի երեքյարկանի տնից, նկուղով 22½ քառակուսի սաժէն հողով, կամ այն չափ, որչափ իսկապէս կը լինի, գտնվում է Թիֆլիզի 5-րդ քաղաքամասում Բեթղեհէմի փողոցում։

Վերոյիշեալ կալուածների աճուրդը կըսկսուի այն գումարից, որ կառաջարկի դրանց գնել ցանկացողը, աճուրդի հաստատելը կախուած կը լինի վարչութեան և վերահսկիչ մասնաժողովի խառն ժողովից։ (3—2)

ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

Օ. ԶԻԲԵՐՏԻ

(№ 7, Դվորցովայա փողոց, տ. Սարաջևի, № 7)

ՍՏԱՑՈՒԱԾ ԵՆ ՄԵԾ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ

ԻՍԿԱԿԱՆ ՃԱՊՈՆԱԿԱՆ ՇԷՆՔԻ ԻՐԵՂԷՆՆԵՐ

ԱԼԲՈՄՆԵՐ, ԻՐԵՂԷՆՆԵՐ ՓՂՈՍԿՐԻՑ, ԿԱՇՈՒՑ ԵՒ ՄԵԼԽԻՕՐԻՑ

(150-123)

Յ. ԹԱՅԻՐԵԱՆԻ և Կ. ԱԼԻԽԱՆԵԱՆԻ

ԶԻԹԱՀԱՆ և ՍԱՊՆԻ ԳՈՐԾԱՐԱՆԸ

այս Մեծ պասի համար առաջարկում է քունջութի, վուշի, կանեփի յԷՐՀԷրԽ մէջ գործածելու, նմանապէս կաստորեան, կանեթղի և ներկելու համար եփած ՃԷԹ, այլ և բարձր տեսակի ԽՈՐՈՆԷՐ։

ՁԷԼԵՐԸ ՀՀԷՐով վաճառվում են դեղատնային ապրանքների Կովկասեան ընկերութեան վաճառատանը. Ջովանիի մօտ՝ Գոլովինսկի պրոսպեկտ, տ. Դորբժանսկու, և Վորոնցովի արձանի մօտ՝ Դարչօ Բոկարովի մօտ, Նիկոլաևսկայա փ., Ալէքսանդրովսկայա եկեղեցու դիմաց. Զալմալեանցի մօտ՝ Պանասէևիչ փ., տ. № 1.

Մաս մաս վաճառվում են սեպհական խանութներում—Միքայէլեան փ. տ. Կարալեանի, Վորոնցովի արձանի մօտ. Սոլդատսկի բազարում՝ տուն Բուղդանեանի. Թուրքաց մէյդանում՝ քաղաքային խանութ. Հալաբարի հրապարակում՝ քաղաքային խանութ, և Օլգինեան փողոցում տուն Մեբուրնութովի։

Մեծ փոփոխութեամբ վաճառվում են գործարանում՝ Էրիվանսկոյէ շոսսէի վրայ, սեպհական շինութեան մէջ։ (8—6)

ԷՄԻՆ ՏԷՐ-ԳՐԻԳՈՐԵԱՆՑ

„Բարեգործութեան դիմակի տակ“

Դրամա 5 գործողութեամբ։

(ԹՈՅԼ Է ՏՐՈՒԱԾ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼ ԲԵՍԻ ՎՐԱՑ)

Դիմել։— Տէֆլիսում. Կենդրոնական և Կովկասեան գրավաճառանոցներին, Եչմիածնում. Հեղինակին։

ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

ՍՏԱՆԻՍԼԱՎ ՉԱՐԱԽՉԻԱՆՈՎԻ

Articles de Paris et Nouveautées. Stanislav Charakchianoff

Maison fondée en 1870

(Դվորցովայա փողոց, շտաբի հանդէպը)

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ ՆՈՐԱՁԵՒ ԵՒ ԳԱԼԱՆՏԵՐԻԱՅԻ ԱԳՐԱՆՔՆԵՐ.—

ԿՕՐՍԵՏՆԵՐ 2 ռ. 50 կ.-ից սկսած։ ԴԼԽԱՐԿՆԵՐ տղամարդկանց համար։ ԱՆՈՒՇԱՀՈՏՈՒԹՈՒՆՆԵՐ—անուշաբոյր օծանելիք՝ գլխաւոր գործարաններից։ Ձեռնոցներ, գուլբաներ, հովանոցներ, ծաղիկներ, հովհարներ, ալբոմներ, նեսեսէրներ, պօրտ-մոնէ։ Բիւրեղեայ, յաղճապակեայ զարդարանքի իրեղէններ։ Ձքեղ իրեր ընծաների համար, խաղալիք և տիկնիկներ։

Օտարաքաղաքացոց պատուէրները կատարվում են ամենայն ճշդութեամբ։ (100—95)

Дозволено цензурою Тифлисъ 11-го Марта, 1895 года. Տպարան Յ. Մարտիրոսեանցի Типографія И. Мартиросіанца, на Орбел. ул., № 1—2